

ԱՄ Փարթնորգ Քոնսալթինգ Քասփեր
2011, Մայիս

Նախատեսվող «Գնիշիկ» ար ելավայրի հարակից համայնքների ելակետային սոցիալ-տնտեսական հետազոտություն



Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ



ԱՄ Փարթնորգ
Քոնսալթինգ Զամփեր

Բովանդակություն

1	ՆԱԽԱԲԱՆ	3
1.1	ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.2	ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	4
1.2.1	Խնդիրներ և առաջադրանք	4
1.2.2	Մեթոդաբանություն	4
1.2.2.1	Տեղեկատվության հավաքագրում	5
1.2.2.2	Տեղեկատվության համակարգում և վերլուծություն	5
2	ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԳՆԻՇԻԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԶԱՐԱԿԻՑ ԶԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ	7
2.1	ԶԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	7
2.1.1	Վարչակազմը	7
2.1.2	Ֆինանսավորում	8
2.1.3	Հողեր	9
2.1.4	Սոցիալական և ժողովրդագրական տվյալներ	12
2.1.4.1	Բնակչության բաշխվածքն ըստ տարիքի և սեռի	12
2.1.4.2	Աշխատանքային միգրացիա	15
2.1.4.3	Կրթություն	15
2.1.4.4	Այլ ժողովրդագրական տեղեկություններ	16
2.2	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	17
2.2.1	Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը	17
2.2.2	Հեռահաղորդակցություն և տրանսպորտային ծառայություններ	18
2.2.2.1	Հեռահաղորդակցություն	18
2.2.2.2	Ճանապարհներ և տրանսպորտային ծառայություններ	19
2.3	ԱՇԽԱՏՈՒԹ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ	21
2.3.1	Մարդկային ռեսուրսներ	21
2.3.2	Եկամուտներ և աղքատություն	23
2.3.2.1	Աղքատության մակարդակը	23
2.4	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	24
2.4.1	Գյուղատնտեսական արտադրանք	24
2.4.1.1	Հողագործություն	24
2.4.1.2	Անասնապահություն	27
2.4.2	Գյուղատնտեսական ենթակառուցվածքներ	30
2.5	ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	31
2.6	ՄԱՍՆԱՎՈՐ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ	32
2.7	ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	33
2.7.1	Բնապահպանական տեսանկյուն	34
2.7.1.1	Ուժեղ կողմեր	34
2.7.1.2	Թույլ կողմեր	34
2.7.1.3	Հնարավորություններ	34
2.7.2	Սոցիալական տեսանկյուն	34

2.7.2.1 Ուժեղ կողմեր	34
2.7.2.2 Թույլ կողմեր.....	34
2.7.3 Տնտեսական տեսանկյուն	35
2.7.3.1 Ուժեղ կողմեր	35
2.7.3.2 Թույլ կողմեր.....	35
2.7.3.3 Հնարավորություններ.....	35
2.7.4 Եզրակացություն.....	35
2.7.5 Ամբողջական SWOT վերլուծություն	36
2.7.5.1 Ուժեղ կողմեր	36
2.7.5.2 Թույլ կողմեր.....	37
2.7.5.3 Հնարավորություններ.....	37
2.7.5.4 Վտանգներ	37
2.8 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲՀՊՏ-ՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	38
2.8.1 Տեղական ինքնակառավարում եւ ֆինանսներ	38
2.8.2 Հողօգտագործում.....	38
2.8.3 Ժողովրդագրական իրավիճակ.....	39
2.8.4 Սոցիալական ծառայություններ եւ ենթակառուցվածքներ	39
2.8.5 Աղքատություն	39
2.8.6 Գյուղատնտեսություն	40
2.8.7 Սանիտարական վիճակ	40
2.8.8 Մասնավոր ձեռնարկատիրություն եւ տուրիստական ներուժ	41
<u>3 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....</u>	<u>42</u>
3.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հարակից համայնքների սոցիալ-տնտեսական տվյալների բազա.....	42

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը, բնական տարածքների մեծամասշտաբ յուրացումը, կլիմայի փոփոխությունները բերել են Էկոհամակարգերի ամբողջականության եւ հավասարակշռության խախտմանը: Պատճառահետեւանքային ազդեցությունները ընդհանուր առմամբ ներառում են խոցելի բնական միջավայրերի դեգրադացումը, բուսական եւ կենդանական տեսակային կազմի նվազեցումը եւ Էկոհամակարգային համալիր մոտեցումների թերի կիրառումը: Այսպիսով, նվազում են համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ապահովող հիմնական աղբյուրներից (բնական պաշարներից) օգտվելու հնարավորությունները:

Գլոբալ Էկոլոգիական Յիմնադրամի (ԳԷՅ) եւ ՄԱԶԾ կողմից ֆինանսավորվող, ՀՀ Բնապահպանության նախարարության եւ Բնության Համաշխարհային Յիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող **Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը** նպատակ ունի անդրադառնալ վերը ներկայացված խնդիրներին եւ գլոբալ առումով նպաստել կենսաբազմազանության պահպանմանը Հայաստանում: *Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը (հետայսու՝ Ծրագիր) ներառելու է հետեւյալ բաղադրիչները.*

1. Պահպանվող տարածքների օպտիմալացում արգելավայրերի հիմնադրման եւ գործարկման կարգավորիչ եւ ինստիտուցիոնալ շրջանակները բարելավելու միջոցով:
2. Կառուցվածքային հզորությունների զարգացում արգելավայրերի կառավարման մի շարք մոդելներ ներկայացնելու (որոնք հիմնականում բացակայում են Հայաստանի Բնության Հատուկ Պահպանվող Տարածքների (ԲՀՊՏ) կառավարման ներկա ռեժիմից) եղանակով:

Նախանշված գործողությունների իրականացման արդյունքում կզարգանա պահպանվող տարածքների համակարգը՝ ներառելով մինչ օրս թույլ ներկայացված Էկոհամակարգերը (լեռնամարգագետնային հողեր, ենթա-ալպյան բարձրադիր լեռներ, ալպյան լեռներ) եւ կենսաբազմազանությունը՝ միաժամանակ նպաստելով աղքատության հաղթահարմանը եւ տնտեսական ու ֆինանսական կայունության հաստատմանը ԲՀՊՏ-ների տարածքում:

«Չանգեզուր» եւ նախատեսվող «Գնիշիկ» ու «Խուստուփ» արգելավայրերին հարակից համայնքների հիմնարար սոցիալ-տնտեսական հետազոտությունը նպատակ ունի տեղեկություններ հավաքել, համակարգել, վերլուծել եւ տրամադրել թիրախված տարածքներում տեղակայված համայնքների սոցիալ-տնտեսական, իրավիճակի մասին մինչեւ բուն ԲՀՊՏ-ների վերջնական հիմնումը Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերում: ԲՀՊՏ-ների հիմնումն այս տարածքներում ինքնանպատակ միջոցառում չի հանդիսանում: Այն խնդիր ունի ապահովել բնապահպանական իրավիճակը (հատկապես Էնդեմիկ տեսակներին վերաբերվող) եւ զուգահեռաբար ապահովել կայուն սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ հարակից համայնքների բնակչության համար:

Ծրագրի իրականացման ներքո ԲՀՀ-Հայաստանի կողմից նախաձեռնվել է երեք առանձին մասերից բաղկացած լայնածավալ հետազոտություն՝ ա) *Գործող եւ նախատեսվող ԲՀՊՏ-ների շահառուների հետազոտություն*, բ) *ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակային հետազոտություն* եւ գ) *Տուրիզմի զարգացման պոտենցիալի գնահատում*: Սույն առաջադրանքը հանձնարարվել է «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամինի» ՍՊԸ հայկական խորհրդատվական

ընկերությանը: Սույն հաշվետվությունն ամփոփում է իրականացված հետազոտության արդյունքները:

Սույն հետազոտությունը համապարփակ անդրադարձ կկատարի թիրախված 12 համայնքներում ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակին՝ ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, ֆինանսական, կրթական, մշակութային ձեռնարկատիրական եւ այլ առումներով:

1.2 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.2.1 Խնդիրներ եւ առաջադրանք

Սոցիալ-տնտեսական հիմնարար հետազոտությունը ներառել է հետեւյալ հանձնարարականները.

1. Հավաքագրել համապատասխան սոցիալ-տնտեսական հիմնարար տեղեկատվություն Նախատեսվող ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների վերաբերյալ:
2. Վերոնշյալ տեղեկատվության օգտագործման եւ խորհրդակցությունների միջոցով պարզել տնտեսական զարգացման հնարավորությունները եւ հնարավոր խոչընդոտները:
3. Այս հետազոտությունների եւ քննարկումների արդյունքում համայնքների ուժեղ եւ թույլ կողմերի վերլուծություն՝ ապահովելով երկարատեւ կայունություն ԲՀՊՏ կառավարման համակարգում:
4. Կազմակերպել եւ վարել որակական հարցազրույցներ եւ/կամ խմբային քննարկումներ այն շահագրգիռ կողմերի հետ, որոնք առկա են գործող «Չանգեզուր» եւ Նախատեսվող «Գնիշիկ» ու «Խուստուփ» արգելավայրերի տարածքում. հաստատություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ եւ համայնքներ:
5. Ըստ անհրաժեշտության՝ կազմակերպել պրեզենտացիա եւ/կամ սեմինար, որը կամփոփի հետազոտության հիմնական արդյունքները:

Ակնկալվում է, որ հետազոտության հետեւյալ հիմնական արդյունքները կներկայացվեն ԲՀՀ-Հայաստանին.

- Հետազոտության մեջ ներգրավված պոտենցիալ շահառուների ցանկը,
- Կիրառված հետազոտության գործիքները,
- Սոցիալ-տնտեսական իրավիճակի տվյալների ամփոփ բազաները,
- Հետազոտության ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ վերլուծական հաշվետվությունը:

Ներկայացված արդյունքները պետք է (կարող են) օգտագործվեն Նախատեսվող արգելավայրերի կառավարման պլանների կազմման ընթացքում:

1.2.2 Մեթոդաբանություն

Ներկայացված սոցիալ-տնտեսական հետազոտությունն իրականացվել է ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնիի կողմից ներկայացված Տեխնիկական Առաջարկում բերված մեթոդաբանության հիման վրա: Առաջադրանքի իրականացումը բաժանվել է 3 պայմանական փուլերի՝ *սոցիալ-տնտեսական տեղեկատվության հավաքագրման, տվյալների համակարգման եւ դասակարգման եւ վերլուծության ու հաշվետվության պատրաստման:*

1.2.2.1 Տեղեկատվության հավաքագրում

Տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է տեղերում (համայնքներում, մարզպետարաններում, պետական կառույցներում եւ այլն) դեմառդեմ հարցազրույցների երկրորդային տեղեկատվության եւ փաստաթղթերի ուսումնասիրության, համայնքների ներկայացուցիչների հետ անմիջական շփումների միջոցով: Տեղեկություններ են ստացվել տարբեր պետական կառույցների մարզային ներկայացուցչություններից, ինչպիսիք են վիճակագրական գործակալությունները, պետական կադաստրի մասնաճյուղերը, ՀԿ-ները, մասնավոր ձեռնարկությունները եւ այլն: Մասնավորապես՝ տվյալների հավաքագրման փուլում օգտագործվել են հետևյալ ելակետային փաստաթղթերը.

- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 9-Ս,
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 4-ԳՏ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 29-ԳՏ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 49-ԳՏՀ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 22 հողհատկացում,
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 24-ԳՏ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 6-ԳՏՀ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 6-մեք (տարին 3 անգամ),
- ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի հաշվետվություն, Ձեւ 22,
- ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի հաշվետվություն, Ձեւ 22ա,
- Համայնքապետարանների կողմից տրամադրված ներքին օգտագործման այլ լրացուցիչ փաստաթղթեր:

Հավաքագրված տեղեկությունները ստուգվել, համադրվել եւ ճշգրտվել են: Կարելի է նշել, որ ներկայացված բոլոր կառույցները եւ համայնքների ներկայացուցիչները պատրաստակամ են եղել համագործակցելու, ներկայացնելու իրենց կարծիքը եւ օժանդակելու իրականացվող աշխատանքին:

Տեղեկատվության հավաքագրման նպատակով օգտագործվել են ստանդարտ հետազոտական գործիքներ, իսկ ներկայացման համար՝ տվյալների բազաներ: Հարմոնիզացված բազաների կիրառությունը թույլ է տվել հորիզոնական վերլուծություն իրականացնել՝ կատարելով համեմատություններ եւ ընդհանրացումներ, ինչպես նաեւ հայտնաբերել հիմնական տարբերությունները: Հավաքագրվել են ինչպես քանակական, այնպես էլ՝ որակական տեղեկություններ:

1.2.2.2 Տեղեկատվության համակարգում եւ վերլուծություն

Հավաքագրված ողջ տեղեկատվությունը համակարգվել է ըստ մարզերի եւ համայնքների: Նման մոտեցումը թույլ է տվել իրականացնել ինչպես ընդհանրացված, այնպես էլ՝ ագրեգացված վերլուծություն: Հնարավոր է դարձել նույնիսկ համեմատականներ անցկացնել երկու մարզերի տարբեր համայնքների միջեւ: Տվյալները դասակարգվել եւ ներկայացվել են հիմնականում աղյուսակների տեսքով, ինչպես եւ բերվել են սույն հաշվետվության մեջ: Միաժամանակ, յուրաքանչյուր համայնքի մասով պատրաստվել է առանձին տվյալների բազա: Ներկայացված հաշվետվության բաժինները մեծամասամբ համընկնում են տվյալների բազայի հիմնական գլուխների հետ, որոնք են.

- Համայնքների ընդհանուր նկարագիրը,
- Ժողովրդագրական իրավիճակը,

- Սոցիալական, մշակութային, հեռահաղորդակցության, կոմունալ, տրանսպորտային և այլ ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը և վիճակը,
- Մարդկային և աշխատանքային առկա ռեսուրսները, զբաղվածությունը և եկամուտների աղբյուրները,
- Համայնքի տարածքի բաշխվածքը, գյուղատնտեսական հողատեսքերը, անասնագլխաքանակը և գյուղատնտեսական արտադրանքի ծավալները,
- Գյուղատնտեսական ծառայությունների և ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը,
- Մասնավոր ձեռնարկատիրության առկայությունը և վիճակը,
- Համայնքների հիմանական ուժեղ և թույլ կողմերը, խնդիրները և հնարավորությունները,
- Այլ տեղեկություններ:

Տվյալների բազայի ընդհանուր կառուցվածքը մշակվել է խորհրդատվական թիմի կողմից նախապես, ներկայացվել է ԲՀՀ-Հայաստանի Ծրագրի Ղեկավարին և հաստատվել նրա կողմից:

2 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԳՆԻՇԻԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

2.1 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1.1 Վարչակազմը

Հետազոտության մեջ ներգրավվել են նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրին հարակից 4 համայնքներ՝ Ագարակաձորը, Արենին, Գնիշիկը (ներառյալ Մոզրով գյուղը) և Խաչիկը: Խորհրդատվական թիմն առանձին-առանձին այցելել է բոլոր համայնքները և անհրաժեշտ տեղեկություններ հավաքել համայնքապետերի, համայնքի վարչակազմի, ինչպես նաև համայնքում հեղինակություն վայելող այլ անձանց հետ սերտ համագործակցության միջոցով: Բոլոր համայնքներում ձեռավորվել են աշխատախմբեր, որոնք հանդիսացել են տվյալ համայնքների վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության առաջնային և հիմնական աղբյուրը: Ստորև որոշ ընդհանուր տեղեկություններ են ներկայացվում նշված համայնքների վերաբերյալ:

Աղյուսակ 1 - Ընդհանուր տեղեկություններ համայնքների և դրանց վարչակազմի վերաբերյալ¹

Բնութագրիչներ	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ	Խաչիկ
Հեռավորությունը մարզկենտրոնից, կմ	3	15	24 (20)	40
Հեռավորությունը Երևանից, կմ	126	106	144 (140)	120
Բարձրությունը ծովի մակարդակից, մ	1,150	1,000	2,060 (1,600)	1,900
Համայնքապետը՝	Դերենիկ Մարտիրոսյան	Ժիրայր Եղյան	Մեսրոպ Մելքոնյան	Վարդան Ներսիսյան
Սկսած	2002թ. հոկտեմբերից	2008թ. հոկտեմբերից	2000թ. նոյեմբերից	2010 հունիսից
Կրթությունը	Միջնակարգ մասնագիտական	Բարձրագույն	Բարձրագույն	Միջնակարգ մասնագիտական
Տվյալները	+374 94 441655	+374 93 236804	+374 93 333386	+374 93 681742
Համայնքապետարանների աշխատակիցների թիվը	17	13	6	12

Համայնքների հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձորից բավականին տարբեր է, ինչը կարելի է, քանի որ մարզկենտրոնը հանդիսանում է տվյալ համայնքներում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի հիմնական շուկան: Հեռավորությունները նմանապես տարբեր են նաև մայրաքաղաք Երևանից: Համայնքները գանազանվում են նաև ծովի մակերեսից իրենց բարձրությամբ, ինչը որոշիչ նշանակություն ունի գյուղատնտեսության այս կամ այն ոլորտի զարգացման պոտենցիալի տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ համայնքապետարաններն ապահովում են շուրջ 50 աշխատատեղեր, սակայն դրանց կեսից պակասն է ֆիզիկապես գտնվում հենց այդ համայնքապետարաններում: Մյուս զբաղվածներն աշխատում են մշակույթի տներում և ակումբներում, գրադարաններում, մանկապարտեզում և այլն: Մասնագիտական գրեթե ողջ անձնակազմն ունի բարձրագույն (առնվազն միջնակարգ մասնագիտական) կրթություն:

¹ Աղբյուրը՝ ԱՄ Փարթնըրզ Զոնասայթինգ Զամփնի հետազոտական թիմ

Սույն բաժնում կարելու հետևությունն այն է, որ հետազոտված 4 համայնքներից 3-ում համայնքների ղեկավարները պաշտոնավարում են արդեն բավականին երկար եւ լավ տեղյակ են իրենց համայնքների խնդիրներին: Նրանք իրենց լուրջ ներդրումը կարող են եւ պարտավոր են բերել ապագա ԲՀՊՏ հիմնման գործում:

2.1.2 Ֆինանսավորում

Հետազոտված համայնքների բյուջեները հանդիսանում են համայնքային ծախսերը ֆինանսավորելու հիմնական աղբյուրը: Ի սկզբանե կարելի է նշել, որ այդ բյուջեները բացարձակապես բավարար չեն համայնքներում կենցաղային պայմանների բարելավման, հնամաշ ենթակառուցվածքների բարեկարգման, ինչպես նաեւ տեղական բնակչության համար ընդունելի սոցիալական, մշակութային եւ այլ պայմանների ապահովման ուղղությամբ միջոցառումների իրականացման համար: Այս խնդիրները որոշակիորեն արժարժված են նաեւ հետազոտված համայնքների 4-ամյա սոցիալ տնտեսական զարգացման ծրագրերում եւ Սյունիքի մարզի ռազմավարական զարգացման ծրագրում²:

Տեղական համայնքների բյուջեների գումարները տատանվում են 20-40 մլն ՀՀ դրամի (55-110 հազար ԱՄՆ դոլարի) սահմաններում: Այս միջոցները բավարարում են հիմնականում համայնքների վարչակազմերի եւ հարակից կառույցների (մշակույթի տների, ակումբների, մանկապարտեզների եւ այլն) աշխատակիցների աշխատավարձերի վճարման համար: Որոշ ոչ մեծ գումարներ հատկացվում են այս կառույցներն աշխատող վիճակում պահպանելու եւ փոքրածավալ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Համայնքային բյուջեների եկամտային մասը բաղկացած է երկու հիմնական բաժիններից՝ *վարչական բյուջեից* (նախատեսված համայնքների գործառնական ծախսերը հոգալու համար) եւ *ֆոնդային բյուջեից* (նախատեսված համայնքում իրականացվող կապիտալ ներդրումները ֆինանսավորելու համար): Պետք է փաստել, որ հետազոտված համայնքներում ֆոնդային բյուջեների համար գումարներ չեն հատկացվել վերջին տարիներին:

Հետազոտված համայնքներում տեղական հարկերի եւ տուրքերի վճարումները կազմել են բյուջետային եկամուտների 7.6%-18%: Հետաքրքրական է, որ հարկերի հավաքագրման փաստացի մակարդակը մոտ է առավելագույնին, սակայն գումարների բացարձակ մեծությունը շատ բարձր չէ: Այլ կերպ ասած՝ շրջանառության մեջ գտնվող (օգտագործվող) ակտիվների ծավալը փոքր է: Համայնքային բյուջեների եկամուտների մեծ մասն ապահովվում է կենտրոնական իշխանությունների կողմից հատկացվող համահարթեցման պաշտոնական դրամաշնորհների միջոցով: 2010թ. դրանց մասնաբաժինը համայնքների բյուջեներում կազմել է 37.9%-78.6%:

Համայնքների բյուջետային եկամուտների մի զգալի մասը ձեւավորվել է հիմնականում կենտրոնական իշխանությունների անուկից մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող վճարներից: Հաշվետվության մեջ դեռ կներկայացվի, որ թիրախված համայնքներում ենթակառուցվածքները գտնվում են ոչ բարվոք վիճակում. դրանց մեծ մասը՝ շենքերը, ճանապարհները, ոռոգման եւ խմելու ջրագծերը, էլեկտրական ցանցը հնամաշ են եւ որոշ դեպքերում անհապաղ վերանորոգման կարիք ունեն: Նման աշխատանքների հետ կապված ծախսերը մեծապես գերազանցում են համայնքային բյուջեները եւ, փաստորեն, մոտ ապագայում առկա իրավիճակի փոփոխության որեւէ գրավական չկա:

² Նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել առաջին պահանջով

Չետեուությունն այն է, որ ԲՀՊՏ ստեղծման եւ մասնավորապես Էկոտուրիզմի զարգացման առումներով անհրաժեշտ է սերտ համագործակցություն ծավալել պետական կառույցների եւ զարգացման ֆինանսավորում իրականացնող միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ միտված համայնքների ընդհանուր եւ ենթակառուցվածքային զարգացման ծրագրերի իրականացմանը:

2.1.3 Յողեր

Համայնքներում հողերի բաշխվածքի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են համայնքապետարաններից, ԱՎԾ-ի Սյունիքի մարզային գործակալությունից, ինչպես նաեւ Անշարժ Գույքի Պետական Կադաստրի «Եղեգնածոր» տարածքային ստորաբաժանումից: Տարբեր աղբյուրներից տվյալները հավաքագրվել են խաչաձեւ ստուգման եւ ճշգրտման նպատակով: Վերլուծության ընթացքում տարբեր աղբյուրներից ստացված տվյալների միջեւ լուրջ անհամապատասխանություններ են արձանագրվել, որոնք հետագայում ավելի խորը վերլուծության են ենթարկվել դրանց պատճառները հասկանալու համար:

Ստորեւ ներկայացված տվյալները ստացվել են Պետական Կադաստրի գրասենյակից, որտեղ արձանագրվում են հողերի նկատմամբ սեփականության իրավունքները եւ օգտագործման նպատակները (ենթադրվում էր, որ հողերի նկատմամբ իրականացված բոլոր փոփոխություններն անմիջապես հաղորդվում են Պետական Կադաստր եւ համապատասխան գրանցում ստանում): Ցավոք, այս ենթադրությունը ոչ միշտ է ճիշտ եւ արդիական. հաճախ պատահում են դեպքեր, երբ ոչ բոլոր նմանատիպ (նույնիսկ խոշոր) փոփոխություններն են գեկուցվում եւ համապատասխան գրանցում ստանում: Յողերի տերերի եւ օգտագործողների կողմից նման պահվածքն ունի հիմնավոր պատճառներ, որոնցից կարելուրագույնը, սակայն շատ պարզ է. հողի հարկը հաշվարկվում է հողի կադաստրային արժեքի հիման վրա: Օրինակ՝ այգիների միավոր կադաստրային արժեքը բարձր է վարելահողերի կադաստրային արժեքից: Չետեաբար՝ դրանց հողի հարկը եւս գերազանցում է վարելահողերի հողի հարկի գումարները: Յողօգտագործողները կարող են վարելահողերի վրա զբաղվել այգեգործությամբ, սակայն չփոխել այդ հողերի նշանակությունը եւ ավելի ցածր հողի հարկ վճարել: Յողի հարկի այս գումարները հատկապես մեծ են խոշոր հողատերերի պարագայում, որոնք չեն վախենում առաջացող ռիսկերից եւ չեն գրանցում իրենց այգիները:

Ինչեւիցե, տվյալները ներկայացվել են հիմնվելով պաշտոնական տեղեկատվության աղբյուրների վրա: Աղյուսակ 2-ում ներկայացված է հետազոտված համայնքներում հողերի բաշխվածքն ըստ դրանց նպատակների եւ գրանցման:

Թիրախված համայնքների ընդհանուր տարածքը կազմում է գրեթե 24,000 հա, եւ առաջատարը Խաչիկն է: Համայնքների տարածքները պաշտոնապես բաժանված են 9 առանձին տեսակների, ինչը ներկայացված է Աղյուսակ 2-ում: Սոցիալ-տնտեսական հետազոտության տեսանկյունից հատկապես կարելուրվում են **գյուղատնտեսական նշանակության հողերը**: Գյուղատնտեսական բոլոր հողերն այս համայնքներում պատկանում են կամ հենց համայնքներին, կամ էլ՝ հայաստանյան ռեզիդենտների՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց: Կենտրոնական իշխանություններին պատկանող հողեր չկան:

Վարելահողերի մակերեսով Խաչիկ համայնքն ակնհայտ առաջատար է եւ ունի մոտ 2 անգամ ավել հողեր, քան Ազարակածորը, եւ մի քանի անգամ ավել՝ քան մյուս երկու համայնքները: Բայց Խաչիկ համայնքի հողերը սահմանակից են Ադրբեջանին եւ չեն կարող անվտանգ մշակվել մինչեւ հակամարտության իրական ավարտը: Յայկական ռեզիդենտների կողմից ներկայումս

սեփականաշնորհվել է հետազոտված համայնքների հողերի զգալի մասը. Ագարակաձորում՝ 60.5%, Արենիում՝ 87.3%-ը, Գնիշիկում՝ 53.2% եւ Խաչիկում՝ 47.6%-ը: Վարձակալված հողերի մասնաբաժինը շոշափելի է Գնիշիկում՝ 46.8%, որին հաջորդում են Խաչիկը՝ 11.9% եւ Արենին՝ 5.8%: Անմշակ վարելահողերը մեծ մաս են կազմում Ագարակաձորում՝ 39.5% եւ Խաչիկում՝ 40.5%: Պետք է սակայն նշել, որ հողերի սեփականաշնորհված լինելը դեռեւս չի վկայում դրանց մշակման մասին: Բազմաթիվ հողատերեր կամ վարձակալներ գերադասում են ամրագրել հողերի նկատմամբ իրենց իրավունքները տարիներ շարունակ, սակայն հաճախ ի վիճակի չեն լինում, կամ չեն ցանկանում մշակել այդ տարածքները:

Բազմամյա տնկարկները հիմնականում կենտրոնացած են Արենի համայնքում: Այստեղ դրանք մոտ 1.5 անգամ ավելի են, քան մյուս համայնքներում միասին վերցրած: Կարելու է նկատել, որ այս տնկարկների գրեթե 87%-ը խաղողի այգիներ են: Այս ցուցանիշը բարձր է բոլոր համայնքներում՝ բացառությամբ Գնիշիկի, որտեղ դրանք կրկնակի քիչ են հիմնականում կլիմայական պայմանների պատճառով: Գրեթե բոլոր բազմամյա տնկարկները սեփականաշնորհված են տեղական հայկական կողմից: Խաղողի այգիների առկայությունը շատ կարելու է խոստովանալից հանգամանք է, քանի որ դա տեղական սուղ ռեսուրսների լավագույն օգտագործման եւ բարձրարժեք արտադրանքի թողարկման լավ օրինակ է հանդիսանում:

Հետազոտված համայնքներում *արոտներն ու խոտհարքները* ներկայումս տեղական բնակչության կողմից օգտագործվում են ըստ նշանակության՝ կերարտադրության եւ ընտանի կենդանիների արածեցման նպատակներով: Այս հողերի միայն փոքր մասն է սեփականաշնորհված կամ վարձակալված՝ չնայած դրանք բավականին ինտենսիվորեն շահագործվում են տեղական բնակչության կողմից: Այս տարածքների արդյունավետ կառավարման գործուն միջոցներ համայնքները պարզապես չունեն: Ներկայումս երկրում արոտավայրերի կառավարման պլանների մշակման ուղղությամբ առաջին քայլերն են իրականացվում, սակայն այդ միջոցառումները դեռեւս շատ արդյունավետ չեն: Նման իրավիճակում ընտանի կենդանիների գերարածեցումը մեծապես ազդում է բնապահպանական իրավիճակի վրա ողջ երկրի մասշտաբով:

Հետազոտված համայնքներում *բնակավայրերի հողերի* ընդհանուր մակերեսը կազմում է 347 հա եւ առաջատարը Արենի համայնքն է: Տեսաբար հողատեսքերը համայնքներում կազմում են բնակավայրերի հողերի 61%-74%: Տեսաբար հողատեսքերը տնային տնտեսությունների (SS-ի) կողմից հիմնականում մշակվում են ինքնապահովման նպատակով, չնայած գյուղատնտեսական արտադրանքի մի որոշ մասը նաեւ վաճառվում է:

Հետազոտված համայնքներում հատուկ ուշադրության են արժանի *արդյունաբերական եւ ընդերքօգտագործման* նշանակության հողերը: Նման տարածքների առկայությունը մշտապես վտանգում է համայնքներում բնապահպանական իրավիճակը՝ չնայած նպաստում է տնտեսական կայունությանը եւ եկամուտներին: Նման տարածքներ արձանագրվել են Ագարակաձոր եւ Արենի համայնքներում: Դրանցից յուրաքանչյուրում հայտնաբերվել են քարերի անկայուն գործող 3-ական հանքավայրեր: Հանքարդյունաբերական տարածքները համայնքներում ընդհանուր առմամբ կազմում են գրեթե 50 հա՝ չնայած բուն քարհանքների մակերեսն ավելի փոքր է:

Աղյուսակ 2 - Համայնքային հողերի բաշխվածքն ըստ օգտագործման նպատակների, հա (2011թ. սկզբի դրությամբ³)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ	Խաչիկ
1.1	1. Գյուղատնտեսական հողեր	Վարելահող	785.78	166.65	257.67	1214.57
1.2		Բազմամյա տնկարկներ, ընդ.	24.90	131.42	35.0	38.11
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի,	24.90	17.53	20.0	6.00
1.2.2		այդ թվում՝ խաղողի այգի		113.89	15.0	32.11
1.3		Խոտհարք	37.00	28.70	85.75	44.04
1.4		Արոտ	950.25	1168.20	5524.93	1388.84
1.5		Այլ հողատեսքեր	3761.29	2408.45	613.52	4323.83
1		Ընդամենը	5559.22	3903.42	6516.87	7009.39
2.1	2. Բնակավայրերի հողեր	Բնակելի կառուցապատման	61.49	100.57	14.27	66.35
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր	61.49	100.57	14.27	66.35
2.1.2		այգեգործական (ամառ-ն)				
2.2		Հասարակական կառուցապ.	1.74	2.08	0.27	3.18
2.3		Խառը կառուցապատման				
2.4		Ընդհանուր օգտագործման	12.49	16.98	2.45	8.03
2.5		Այլ հողեր	6.99	29.90	6.27	14.29
2		Ընդամենը	82.71	149.53	23.26	91.85
3.1	3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Արդյունաբերության		0.01		0.84
3.2		Գյուղատնտեսական, արտադր.	6.22	12.30	0.9	0.70
3.3		Պահեստարանների		0.09		0.05
3.4		Ընդերք օգտագործման	11.81	35.14		
3		Ընդամենը	18.03	47.54	0.9	1.59
4.1	4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	Էներգետիկայի	0.03	0.04	0.00	0.02
4.2		Կապի		0.01		
4.3		Տրանսպորտի	0.80	15.03	14.03	7.00
4.4		Կոմունալ ենթակառուցվածք	0.08			0.02
4		Ընդամենը	0.91	15.08	14.03	7.04
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր	Բնապահպանական		154.40		
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ		154.40		
5.2		Առողջարարական				
5.3		Հանգստի				
5.4		Պատմական եւ մշակութային	59.07	18.92	1.31	34.52
5	Ընդամենը	59.07	173.32	1.31	34.52	
6	6. Հատուկ նշանակության հողեր	Ընդամենը		0.24		1.25
7.1	7. Անտառային հողեր	Անտառ	25.00			156.90
7.2		Թփուտ				
7.3		Վարելահող				
7.4		Խոտհարք				
7.5		Արոտ				
7.6		Այլ հողեր				
7		Ընդամենը	25.00			156.90
8.1	8. Ջրային տարածքներ	Գետեր	14.65	37.98	3.56	
8.2		Ջրամբարներ				0.39
8.3		Լճեր	0.49			
8.4		Ջրանցքներ	1.95	2.94		
8.5		Հիդրոտեխ. եւ ջրտնտ. այլ օբ.		6.20		0.64
8	Ընդամենը	17.09	47.12	3.56	1.03	
9.1	9. Պահուստային հողեր	Աղուտներ				
9.2		Ավազուտներ				
9.3		Ճահիճներ				
9.5		Այլ անօգտագործելի հողեր				
9		Ընդամենը				
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ 1+2+3+4+5+6+7+8+9			5762.03	4336.25	6559.93	7303.57

³ Աղբյուր՝ Կադաստրի պետական կոմիտեի Վայոց Ձորի մասնաճյուղ

Թիրախված համայնքների տարածքում առկա են նաեւ այլ պահպանվող տարածքներ, որոնք պատկանում են «Արփի» բնապատմական արգելոցին: Ընդհանուր առմամբ դրանց մակերեսը կազմում է 268 հա, որի մեծ մասը՝ կրկին Արենիում: Հատուկ պահպանվող տարածքների առկայությունը լուրջ գրավական է համայնքներում բնապահպանական իրավիճակի բարելավման եւ պատմամշակութային եւ բնական հուշարձանների պահպանման համար: Այս երեւոյթը մեծապես կարելուովում է նաեւ տնտեսական՝ հատկապես տուրիզմի հնարավորությունների զարգացման տեսանկյունից:

ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից վերը ներկայացված վերլուծությունից կարելի է առանձնացնել հողերի գյուղատնտեսական օգտագործման հանգամանքը: ԲՀՊՏ-ները ըստ սահմանման պետք է հանդիսանան կայուն զարգացման տարածքներ եւ համայնքներում պետք է ապահովվեն եկամուտների գեներացման արդյունավետ հիմքեր: Տվյալ պարագայում լավագույն այլընտրանքը գյուղատնտեսության զարգացումն է: Այս նպատակով ոչ բոլոր նախադրյալներն են առկա. հողագործության վարման պայմանները եւ եղանակները համայնքներում շատ արդյունավետ չեն: ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից լուրջ միջոցառումներ պետք է իրականացվեն հողերի պլանավորման, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման, բերքատվության բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման եւ այլ առումներով:

2.1.4 Սոցիալական եւ ժողովրդագրական տվյալներ

2.1.4.1 Բնակչության բաշխվածքն ըստ տարիքի եւ սեռի

Հետազոտված համայնքների ժողովրդագրական տվյալները հավաքագրվել են համայնքապետարաններից եւ ճշգրտվել են տարածքային վիճակագրական ծառայության միջոցով: Ստացված տեղեկությունների մեջ որոշ անճշտություններ են հայտնաբերվել, որոնք հարթվել են հետագա քննարկումների ընթացքում: Համայնքների համակարգված վիճակագրական տվյալները ներկայացված են Աղյուսակ 3-ում: Ժողովրդագրական իրավիճակի ուսումնասիրությունը մեծապես կարելուովում է, քանի որ այն կարող է պայմանավորել համայնքներում սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծավալը եւ բնույթը:

Բնակչության ընդհանուր թիվը հետազոտված համայնքներում կազմում է 4,229 մարդ 2011թ. հունվարի 1-ի դրությամբ: Սեռային բաշխվածքը գրեթե հավասարաչափ է, արական բնակչությունը կազմում է 47.36%: Կանանց փոքր-ինչ գերակշռող քանակը պայմանավորված է արական բնակչության երկարաժամկետ աշխատանքային միգրացիայի առկայությամբ: Իրավիճակը հատկապես վատ է Գնիշիկ համայնքում, որտեղ բնակչության քանակը շատ քիչ է: Մյուս համայնքներում բնակվողների թիվն ավելի բարձր է եւ բավարար է զարգացման ծրագրեր իրականացնելու համար:

Աղյուսակ 3 - Համայնքների բնակչության ժողովրդագրական բաշխվածքը (մարդ), 2011թ. հունվարի 1-ի դրությամբ⁴

	Ագարակաձոր - 344 ՏՏ					Արենի - 543 ՏՏ					Գնիշիկ (Մոզրով) - 61 ՏՏ					Խաչիկ - 257 ՏՏ				
	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	Մշտապես ներկա	Ժամանակավոր բացակա	Երկարատե բացակայող	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	Մշտապես ներկա	Ժամանակավոր բացակա	Երկարատե բացակայող	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	Մշտապես ներկա	Ժամանակավոր բացակա	Երկարատե բացակայող	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	Մշտապես ներկա	Ժամանակավոր բացակա	Երկարատե բացակայող	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)
Բնակչության թվաքանակը, մարդ, ա.թ.	1357	1241	116	124	1241	1861	1722	139	145	1769	217	209	8	8	212	1028	918	110	37	1007
<i>արական</i>	<i>677</i>	<i>592</i>	<i>85</i>	<i>80</i>	<i>592</i>	<i>936</i>	<i>847</i>	<i>89</i>	<i>87</i>	<i>851</i>	<i>100</i>	<i>95</i>	<i>5</i>	<i>4</i>	<i>96</i>	<i>498</i>	<i>428</i>	<i>70</i>	<i>25</i>	<i>464</i>
<i>իգական</i>	<i>680</i>	<i>649</i>	<i>31</i>	<i>44</i>	<i>649</i>	<i>925</i>	<i>875</i>	<i>50</i>	<i>58</i>	<i>918</i>	<i>117</i>	<i>114</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>116</i>	<i>530</i>	<i>490</i>	<i>40</i>	<i>12</i>	<i>543</i>
Ժամանակավոր բնակչություն, ա.թ.										47					3					89
<i>արական</i>										4					1					36
<i>իգական</i>										43					2					53
Չբաղված բնակչություն (առանց ժամանակավոր ներկաների), ա.թ.					929					1016					166					483
<i>Գյուղատնտեսութ. մեջ</i>					761					795					154					375
<i>Ոչ գյուղատնտ. գործողությ., ա.թ.</i>					168					221					12					108
<i>Կազմակերպութ.</i>					106					197					12					105

Առկա բնակչության 61.34%-ը զբաղված է՝ իրականացնում է եկամուտ հետապնդող տնտեսական գործողություններ: Հաշվի առնելով անչափահասների եւ տարեցների բավականին մեծ թիվը՝ սա բավականին բարձր ցուցանիշ է: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ զբաղվածների մի զգալի մասը՝ ողջ բնակչության 49.3%-ը, զբաղված է գյուղատնտեսության մեջ (հիմնականում սեփական սպառմանը միտված): Ընդհանուր բնակչության մոտ 10% զբաղված է պետական բյուջեից ֆինանսավորվող ոչ-գյուղատնտեսական գործունեություն

⁴ Աղբյուր՝ համայնքապետարաններ, ԱԿԾ Վայոց Ձորի մասնաճյուղ, ԱՄ Փարթնրոգ Զոնասլթինգ Զամփնիի հետազոտական թիմ

իրականացնող կազմակերպություններում, ինչպիսիք են համայնքապետարանները, դպրոցները, առողջապահական հիմնարկները: Մասնավոր ձեռնարկությունների կողմից քիչ աշխատատեղեր են ապահովվում՝ հիմնականում մանրածախ առևտրի եւ ծառայությունների ոլորտներում:

Համայնքների բնակչության սեռատարիքային բաշխվածքը տարածքում զարգացման ծրագրերի իրականացման մեկ այլ որոշիչ գործոն է հանդիսանում, որը բնորոշում է առկա մարդկային ռեսուրսները: Ստորել բերված աղյուսակը ներկայացնում է ընթացիկ իրավիճակը:

Աղյուսակ 4 - Համայնքների ժողովրդագրական բաշխվածքն ըստ տարիքի եւ սեռի (մարդ), 2011թ. հունվարի 1-ի դրությամբ⁵

Համայնքներ	Ագարակաձոր - 344 ՏՏ						Արենի - 543 ՏՏ						Գնիշիկ (Սոզոլ) - 61 ՏՏ						Խաչիկ - 257 ՏՏ					
	0-7	8-15	16-62	63 եւ բարձր	16-61	62 եւ բարձր	0-7	8-15	16-62	63 եւ բարձր	16-61	62 եւ բարձր	0-7	8-15	16-62	63 եւ բարձր	16-61	62 եւ բարձր	0-7	8-15	16-62	63 եւ բարձր	16-61	62 եւ բարձր
Բնակչության թվաքանակը, մարդ, ա.թ	79	109	437	57	471	88	172	157	586	78	640	136	18	25	70	4	85	10	73	97	340	49	355	93
արական	49	49	437	57			95	92	586	78			11	11	70	4			36	39	340	49		
իգական	30	60			471	88	77	65			640	136	7	14			85	10	37	58			355	93
Ժամանակավոր բնակչություն, ա.թ.							2	1	2		41	1				1	1	1	6	3	32		48	
արական							1	1	2							1			3	1	32			
իգական							1				41	1					1	1	3	2			48	
Զբաղված բնակչություն (առանց ժամանակավոր ներկաների), ա.թ.		6	398	46	405	74			472	59	423	62			70	3	84	9			245	18	220	
Գյուղատնտեսությ. մեջ		6	319	46	317	73			331	54	349	61			67	3	75	9			165	17	193	
Ոչ գյուղատնտ. գործողությ., ա.թ.			79		88	1			141	5	74	1			3		9				80	1	27	
Կազմակերպութ.			54		51	1			121	4	71	1			3		9				79	1	25	

16-62(63) տարեկան առկա բնակչությունը սովորաբար դիտարկվում է որպես զարգացման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրս: Դիտարկվող համայնքներում այս տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է մոտ 70%, ինչը վկայում է նման ռեսուրսի առկայության մասին՝ չնայած առկա է բնակչության ծերացման որոշակի միտում:

Հետաքրքրական է նաեւ, որ տարեց բնակչության մեծ մասը եւս զբաղված է: Տարեցների շատ քիչ մասն է տնտեսապես ոչ ակտիվ: Այս մարդիկ սովորաբար զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ չնայած հիմնականում սեփական սպառմանը միտված ապրանքներ արտադրելով: Ընդհանրապես այս երեւույթը հատկանշական է գյուղական տարածքների բնակչության համար:

⁵ Աղբյուր՝ համայնքապետարաններ, ԱԿԾ Վայոց Ձորի մասնաճյուղ, ԱՄ Փարթնըրզ Զոնսալիսնգ Զամփնիի հետազոտական թիմ

2.1.4.2 Աշխատանքային միգրացիա

Վերը ներկայացված աղյուսակներում բերված են հավաստի ժողովրդագրական տեղեկություններ, սակայն դրանք չեն արտացոլում մի այնպիսի կարելի ժողովրդագրական տվյալ ինչպիսին աշխատանքային միգրացիան է: Ցավոք այս երեւոյթը հայկական իրականության անբաժանելի մասն է հանդիսանում եւ հետազոտված համայնքները բացառություն չեն կազմում: Այս համայնքներից ամեն տարի բավականին մեծ քանակությամբ մարդիկ գնում են արտագնա աշխատանքի՝ հիմնականում Ռուսաստանի դաշնություն: Սա շատ կարելի հանգամանք է, քանի որ հեռացողների գերակշիռ մեծամասնությունը աշխատունակ տարիքի արական բնակչությունն է, որը կարելիորագույն նշանակություն ունի համայնքային զարգացման տեսանկյունից: Աշխատանքային միգրացիայի միտումները հետազոտված համայնքներում քիչ թե շատ կայուն են եղել վերջին տարիներին: Մանրամասները ներկայացած են ստորեւ:

Աղյուսակ 5 - Աշխատանքային միգրացիան համայնքներում, մարդ⁶

Տարի / Համայնք	2008	2009	2010		Ընդամենը
			Քանակ	%	
Ագարակաձոր	60	70	75	6.04%	205
Արենի	140	140	140	7.91%	420
Գնիշիկ (Մոզրով)	22	13	9	4.25%	44
Խաչիկ	30	30	20	1.99%	80
Ընդամենը	252	253	244	5.77%	749

2.1.4.3 Կրթություն

Համայնքներում մարդկային ռեսուրսների առկայությունը բնութագրող հաջորդ կարելի բնութագրիչը բնակչության կրթական մակարդակն է: Կրթական ընդհանուր բարձր մակարդակը նշանակում է համայնքներում որակյալ աշխատուժի առկայություն, ինչը մեծապես հեշտացնում է տարբեր նպատակներով անհրաժեշտ որակյալ մասնագետների ներգրավումը: Բացի այդ, պատրաստված բնակիչները սովորաբար ավելի շատ են անհանգստանում իրենց համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակով եւ ավելի պատրաստակամ են: Համայնքների բնակչության բաշխվածքն ըստ կրթական մակարդակի ներկայացվում է ստորեւ:

Աղյուսակ 6 - 18 տարեկանից բարձր բնակչության բաշխվածքն ըստ կրթական մակարդակի (մարդ), 2011թ. հունվարի 1-ի դրությամբ

Կրթական կարգավիճակ	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ	Ընդամենը
Դպրոց չհաճախած	1	0	0	0	1
Տարրական դպրոց	10	200	10	30	250
Անավարտ միջնակարգ	45	200	10	70	325
Միջնակարգ	818	758	108	577	2261
Միջնակարգ մասնագիտ.	100	70	10	70	250
Բարձրագույն	30	150	20	50	250
Ընդամենը	1004	1378	158	797	3337

⁶ Աղբյուր՝ համայնքապետեր եւ համայնքապետարանների աշխատակազմ

Երեխաների կրթությունը կարելուրագույն խնդիր է հանդիսանում հայկական հասարակության մեջ: Բազմաթիվ ՏՏ-ներ կենսապայմանները բարելավելու կամ նոր գործունեություն սկսելու փոխարեն գերադասում են ներդրումներ կատարել երիտասարդ սերնդի կրթության մեջ: Սա ձեւավորվել է ավանդաբար՝ չնայած վերջին ժամանակահատվածում բարձրագույն կրթության թանկացումը մեծապես խոչընդոտում է այս միտմանը: Բնակչությունը տարրական եւ միջնակարգ կրթություն է ստանում հենց համայնքներում, մինչդեռ մասնագիտական եւ բարձրագույն կրթությունը նրանց համար հասանելի է միայն մարզկենտրոն Եղեգնաձորում կամ մայրաքաղաք Երեւանում: Բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվով առաջատարը Արենի համայնքն է:

2.1.4.4 Այլ ժողովրդագրական տեղեկություններ

Հետազոտված համայնքներում բնական աճի միտումները վերջին ժամանակահատվածում ընդհանուր առմամբ դրական են (բացառությամբ Խաչիկ համայնքի): Դա հուսադրող է, քանի որ վկայում է համայնքների բնակչության (հատկապես երիտասարդության) ապագայի նկատմամբ ունեցած պլանների մասին: Մանրամասները ներկայացվում են ստորեւ:

Աղյուսակ 7 - Ծնունդների եւ մահերի դիսամիկան հետազոտված համայնքներում, մարդ⁷

Տարիներ / Համայնքներ	2008		2009		2010		Ընդամենը	
	Ծնունդներ	Մահեր	Ծնունդներ	Մահեր	Ծնունդներ	Մահեր	Ծնունդներ	Մահեր
Ագարակաձոր	14	8	14	11	16	15	44	34
Արենի	30	12	30	21	25	15	85	48
Գնիշիկ (Մոզրով)	2	1	1	3	5	1	8	5
Խաչիկ	8	15	11	11	8	6	27	32
Ընդամենը	54	36	56	46	54	37	164	119

Հետազոտված համայնքների բնակչությունը մոնոթնիկ է. հայտնաբերվել են ընդամենը 5 այլազգի բնակիչներ: Նույնը վերաբերվում է նաեւ կրոնական հակումներին. Հայ Առաքելական դավանանք չունեն ոչ ավել, քան 100 բնակիչ՝ ընդհանուրի 2.4%-ը:

ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը ծայրահեղ կարելուր նշանակություն ունի: Այս գործընթացն ակնկալում է կոնկրետ մարդկային ռեսուրսների առկայություն նշված տարածքներում: Կարելի է եզրակացնել, որ հետազոտված համայնքներում առկա մարդկային եւ աշխատանքային ռեսուրսները (բնակչության թվաքանակը, սեռատարիքային բաշխվածքը, կրթական մակարդակը եւ այլն) բավարար են ԲՀՊՏ հիմնման գործողությունների նախաձեռնման տեսանկյունից: Մյուս կողմից՝ ԲՀՊՏ հիմնման արդյունքում տեղական բնակչությունը հնարավորություն կստանա նոր որակներ եւ ունակություններ ձեւավորել, նոր տեսակի ծառայություններ ձեւավորել եւ մատուցել, որոնք ներկայումս դեռեւս սաղմնային վիճակի մեջ են գտնվում: Այս առումով մեծ աշխատանք ունեն անելու նաեւ ապագա ԲՀՊՏ հիմնման մեջ ներգրավված կազմակերպությունները: Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության եւ վստահության բարձրացման, կրթական եւ վերապատրաստման, լրացուցիչ շահագրգռվածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

⁷ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱԿԾ Վայոց Ձորի մասնաճյուղ

2.2 ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.2.1 Սոցիալական ենթակառուցվածքների եւ ծառայությունների առկայությունը

Սոցիալական ենթակառուցվածքների՝ կրթական եւ առողջապահական հաստատությունների, սպորտային եւ արվեստի խմբակների եւ կառույցների, զվարճանքի վայրերի առկայությունը համայնքներում շատ կարեւոր է համայնքային զարգացման տեսանկյունից: Ավելին, շատ հաճախ այս ենթակառուցվածքների բացակայությունը դառնում է բնակչության դժգոհության, ինքնադրսեւորման սահմանափակման, եւ նույնիսկ համայնքը լքելու հիմնական պատճառներից մեկը: Պահպանվող տարածքների հիմնման տեսանկյունից գործող ենթակառուցվածքների առկայությունը պարզապես անհրաժեշտություն է: Մեր օրերում, պահպանվող տարածքի հիմնումը նշանակում է ոչ միայն բնապահպանական բարձր մակարդակ, այլեւ հարակից բնակավայրերի կայուն եւ օրինակելի զարգացում, ինչի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել մարդու եւ բնության հավասարակշռված գոյակցությունը:

Հայաստանում սոցիալական ենթակառուցվածքների գործունեությունը սովորաբար ֆինանսավորվում եւ կարգավորվում է պետության կողմից: Ցավոք այս կառույցներն իրենց մեծամասնության մեջ (հատկապես գյուղական բնակավայրերում) գտնվում են վատ վիճակում եւ պետությունը սովորաբար ի վիճակի չի լինում բավարար ֆինանսական միջոցներ հատկացնել դրանց պատշաճ պահպանման համար: Իրավիճակը նույնն է նաեւ նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊՏ հարակից գյուղական համայնքներում: Կենտրոնական մայրուղուն մոտ գտնվող կամ կոնկրետ առումներով համեմատաբար ճանաչված համայնքները դեռեւս կարողանում են որոշակիորեն հոգալ իրենց կարիքները եւ պահպանել ենթակառուցվածքները: Մյուս համայնքները՝ հատկապես հեռավոր գյուղերը, սովորաբար լուրջ խնդիրներ են արձանագրում այս հարցերում: Հետազոտված համայնքներում սոցիալական ենթակառուցվածքների առկայությունը եւ դրանց վիճակը ներկայացված է ստորեւ:

Աղյուսակ 8 - Համայնքների ենթակառուցվածքները, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ⁸

Ենթակառուցվածքներ եւ ծառայություններ	Ազարակածոր	Արեւի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ
Միջնակարգ դպրոց	123 աշակերտներ (աճի միտում), 23 ուսուցիչներ (4-ը Եղեգնաձորից)	222 աշակերտներ (5-ը այլ համայնքներից), նվազման միտում, 30 ուսուցիչներ	8-ամյա դպրոց, 2 աշակերտներ	110 աշակերտներ, 20 ուսուցիչներ
Մանկապարտեզ	Սեզոնային (ապրիլից-նոյեմբեր), 29 երեխաներ	-	- (երեխաների քանակը բավարար չէ)	Նախատեսվում է գործարկել 2011թ.-ին
Սպորտային ակումբ	-	-	-	Ծանրամարտի եւ պարի խմբակներ
Սպորտային կառույց	Ֆուտբոլի մարզադաշտ, դպրոցի սպորտային դահլիճներ, (ներքին եւ արտաքին)	Նոր սպորտային դահլիճը կառուցվում է	-	Նախատեսվում է 2011թ.-ին
Առողջապահական հաստատություն	Բուժկետ, 2 քույրեր	Առողջապահական Կենտրոն, 2 բժիշկներ, 1 ատամնաբույժ, 3 քույրեր	-	Բուժկետ, 1 բժիշկ, 1 քույր
Մոտակա բժիշկը	Եղեգնաձորում,	Համայնքում	Եղեգնաձորում	Համայնքում

⁸ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնսալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

	այցելում է համայնք ամսական 2 անգամ			
Դեղատուն	Չկա, մոտական՝ Եղեգնաձորում	Համայնքում	Չկա, մոտական՝ Արփի գյուղում	Չկա, մոտական՝ Արենի գյուղում
Շտապ օգնության մեքենա	Չկա, մոտական՝ Եղեգնաձորում	Չկա, մոտական՝ Եղեգնաձորում	Չկա, մոտական՝ Եղեգնաձորում	Չկա, մոտական՝ Եղեգնաձորում
Գրադարան	Գործում է	Գործում է	Գործում է	Գործում է
Մշակույթի տուն	Գործում է	Գործում է	Չկա	Գործում է
Մշակութային միջոցառում	Ներկայացումներ, համերգներ (անկանոն)	Համայնքը տոնում է բոլոր պաշտոնական տոները, Գինու Փառատոն է կազմակերպվում ամեն տարի	Եզակի միջոցառումներ դպրոցում	Ներկայացումներ, համերգներ (անկանոն)
Եկեղեցիներ	11 հուշարձաններ եւ եկեղեցիներ	5 եկեղեցիներ եւ 10-ից ավել հուշարձաններ	4 տեսարժան վայրեր	3 տեսարժան վայրեր
Արվեստագետներ, նկարիչներ	Չկան	5 մարդ	2 մարդ	Չկան

Վերը բերված աղյուսակում համապարփակ ներկայացված է հետազոտված համայնքներում սոցիալական ենթակառուցվածքների իրավիճակը. ընդամենը մի քանի մեկնաբանություններ: Գնիշիկն ամենաթույլ զարգացած համայնքն է սոցիալական ենթակառուցվածքների առկայության եւ դրանց վիճակի տեսանկյունից: Սա իսկապես մարտահրավեր է, քանի որ նախատեսվում է, որ այս համայնքը կդառնա ապագա պահպանվող տարածքի կենտրոնական վայրերից մեկը: Բոլոր համայնքներում պետք է ստեղծվեն բարելավվի սպորտային եւ արվեստի խմբակներ, զվարճանքի հնարավորություններ, բացվեն դեղատներ, ավելի շատ միջոցառումներ պետք է կազմակերպվեն: Սա կարելի է ոչ միայն բնակչության ինքնադրսեւորման, այլ նաեւ տուրիստական գրավչության բարձրացման տեսանկյունից: Նշվածի լավագույն ապացույցը Արենի համայնքի օրինակն է:

Բոլոր հետազոտված համայնքները տեղակայված են պատմական տարածքներում, ունեն գեղեցիկ բնություն, հարուստ են պատմամշակութային եւ բնական հուշարձաններով, եկեղեցիներով եւ այլն: Այս ռեսուրսների առկայությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում տուրիզմի զարգացման համար՝ չնայած որ ոչ բոլոր անհրաժեշտ պայմաններն են ներկայումս բավարարված: Մասնավորապես՝ շոշափելի միջոցառումներ պետք է իրականացվեն տուրիստական ծառայությունների ձեւավորման եւ դրանց խթանման ուղղությամբ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

2.2.2 Հեռահաղորդակցություն եւ տրանսպորտային ծառայություններ

2.2.2.1 Հեռահաղորդակցություն

Ներկայիս իրականության մեջ հեռահաղորդակցության ծառայությունները գնալով ավելի հանապազօրյա անհրաժեշտություն են դառնում: Մարդիկ կանոնավոր հաղորդակցության կարիք ունեն եւ հակված են ավելի ու ավելի բարդ ծառայություններ սպառել: Եթե մի քանի տարի առաջ գծային հեռախոսակապը եւ փոստային ծառայությունները հաղորդակցման միակ միջոցներն էին գյուղական համայնքներում, ապա ներկայիս բնակչությունը ավելի ժամանակակից եւ բարդ ծառայությունների պահանջարկ է ներկայացնում: Մոբիլ հեռախոսները դարձել են առաջին անհրաժեշտության գործիքներ, համացանցային ծառայությունները լայնորեն ներդրվում եւ սպառվում են:

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հետազոտված համայնքներում հեռահաղորդակցման ծառայությունները գտնվում են ընդունելի նվազագույն մակարդակի վրա: Մանրամասները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 9 - Հաղորդակցության ենթակառուցվածքները և ծառայությունները, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ⁹

Ենթակառուցվածքներ	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ
Գծային հեռախոսակապ	Բոլոր տներում	Բոլոր տներում	Տների 60%-ում	Արմենթելի ռադիոկապ տների 90%-ում
Շարժական հեռախոսակապ	Vivacell, Beeline, Orange	Vivacell, Beeline, Orange	Vivacell, Beeline (թույլ), Orange (թույլ)	Vivacell, Beeline
Փոստային ծառայություններ	Գործում է	Գործում է	Գործում է	Գործում է
Ինտերնետ (համացանց)	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Շարժական հեռախոսակապի մոդեմներով (գրեթե անհասանելի)	Շարժական հեռախոսակապի մոդեմներով (մի քանի տներում)
Հեռուստատեսություն	Հ1, Հ2, Շողակաթ, RTR (բացի արբանյակային ալիքներից)	Հ1, Հ2, RTR (բացի արբանյակային ալիքներից) + ORT և Շանթ համայնքապետարանի ֆինանսավորմամբ	Հ1, Հ2, RTR, Շանթ (բացի արբանյակային ալիքներից)	Հ1, Հ2, Շողակաթ, RTR (բացի արբանյակային ալիքներից)
Ռադիո	Հեռարձակվում է	1 հասարակական ալիք	Չի հեռարձակվում	Չի հեռարձակվում

Հետազոտված համայնքների գրեթե բոլոր տներն ունեն գծային հեռախոսակապ, ինչը զգալիորեն հեշտացնում է Էժանացում է համայնքների ներսում հաղորդակցվելը: Հասանելի է նաև շարժական հեռախոսակապ՝ չնայած Գնիշիկ համայնքի դեպքում արդյունավետ է միայն Vivacell-ը: Ինտերնետը շատ տարածված չէ. չկան տեղային մատակարարներ և մի շարք կարելի է ծառայություններ (Էլեկտրոնային փոստ, Skype և այլն) մասնակիորեն են հասանելի: Ինտերնետից հազվագյուտ օգտվողները միանալու համար հիմնականում օգտագործում են շարժական հեռախոսակապի մոդեմներ:

Հեռուստատեսային և ռադիո հեռարձակումը խիստ սահմանափակ է և ոչ բարձր որակի: Հեռարձակվում են հիմնականում կենտրոնական (ազգային) հեռուստաալիքներ, ինչը նշանակում է, որ դրանց օգտագործումը պահպանվող տարածքների վերաբերյալ տեղական բնակչության իրազեկության բարձրացման նպատակով բավականին թանկ կարող է արժենալ: Ռադիո հեռարձակումը փաստացի բացակայում է և որպես տեղեկատվական արշավի գործիք չի կարող դիտարկվել:

2.2.2.2 Ծանապարհներ և տրանսպորտային ծառայություններ

Հետազոտված համայնքների զարգացման պոտենցիալը բնութագրող հաջորդ գործոնները ճանապարհների վիճակն ու հասարակական տրանսպորտի առկայությունն է: Այլ պայմանների շարքում, սրանք եւս պայմանավորում են համայնքների համար շուկաների հասանելիությունը, սոցիալական ծառայությունների (կրթական, առողջապահական և այլն) որակը, ինչպես նաև

⁹ Աղբյուր՝ համայնքապետարաններ և ԱՄ Փարթնըրզ Զոնսալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

որոշակիորեն բնութագրում են կոնկրետ վայրերի տուրիստական գրավչությունը: Հետազոտված համայնքներում ճանապարհների վիճակի եւ տրանսպորտի առկայության վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 10 - Ճանապարհներ եւ տրանսպորտ¹⁰

	Ագարակածոր	Արենի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ
Դեպի մոտակա քաղաք կամ մարզկենտրոն տանող հասարակական տրանսպորտ	Օրական 3 անգամ, շաբաթական 18 անգամ	Օրական 3 անգամ, շաբաթական 15 անգամ	Օրական 3 անգամ, շաբաթական 15 անգամ	Շաբաթական 2 անգամ
Դեպի հարեւան համայնք տանող հասարակական տրանսպորտ	Չկա	Չկա	Չկա	Նույն տրանսպորտն անցնում է Արենիի միջով
Դեպի մարզկենտրոն ճանապարհի վիճակը, որից՝				
<i>ասֆալտապատ</i>	3 կմ նորմալ ճանապարհ	15 կմ շատ լավ ճանապարհ	27 կմ նորմալ ճանապարհի դեպի Գնիշիկ, 9 կմ նորմալ ճանապարհի դեպի Մոզրով	30 կմ շատ լավ եւ 10 կմ նորմալ ճանապարհներ
<i>ոչ-ասֆալտապատ</i>	-	-	11 կմ տանելի ճանապարհի դեպի Մոզրով	-
Դեպի մարզկենտրոն ճանապարհի վիճակը ձմռանը, որից՝	Լրիվ անցանելի	Լրիվ անցանելի	Տարեկան մի քանի օր անանցանելի	Լրիվ անցանելի
Համայնքային ճանապարհների վիճակը, որից				
<i>ասֆալտապատ</i>	-	3 կմ շատ լավ ճանապարհ	1 կմ տանելի ճանապարհի դեպի Գնիշիկ	-
<i>ոչ-ասֆալտապատ</i>	12 կմ տանելի ճանապարհ	37 կմ տանելի ճանապարհ	2 կմ տանելի ճանապարհի դեպի Գնիշիկ եւ 1.5 կմ դեպի Մոզրով, 1 կմ վատ ճանապարհի դեպի Գնիշիկ եւ 0.5 կմ դեպի Մոզրով	10 կմ տանելի ճանապարհ

Ընդհանուր առմամբ մարզկենտրոն Եղեգնաձորից (նաեւ Երեւանից) դեպի նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հետազոտված համայնքներ տանող ճանապարհները կամ լավն են, կամ տանելի: Գնալու ճանապարհներն անցանելի են մնում գրեթե ամբողջ տարվա ընթացքում՝ նույնիսկ ձմռանը: Դրական այս իրավիճակն ապահովվել է պետական բյուջեից եւ միջազգային ֆինանսական կառույցներից հատկացվող մեծածավալ ներդրումների իրականացման միջոցով: Ամենաթույլ կետը կրկին Գնիշիկն է, ինչը կրկին շատ վատ է, քանի որ համայնքն ակնհայտորեն ունի տուրիզմի զարգացման լուրջ պոտենցիալ:

Հետազոտված համայնքներում սոցիալական ծառայությունների եւ ենթակառուցվածքների զարգացումն անհրաժեշտ է նախ եւ առաջ համայնքների կայուն զարգացման նպատակով: Սա իրականում ԲՀՊՏ հիմնման եւ կայացման նախապայման է հանդիսանում: Ավելի կոնկրետ մոտեցման դեպքում ենթակառուցվածքների զարգացումը ԲՀՊՏ տարածքում տուրիզմի զարգացման

¹⁰ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Բոնասալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

կարելուրագույն նախապայման է: Ներկայիս իրավիճակում նման զարգացման նախադրյալները դեռևս կատարյալ չեն. համայնքային եւ միջհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չէ եւ կան անանցանելի հատվածներ, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային եւ էթնոտուրիզմի ենթակառուցվածքներն անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումները սահմանափակ են եւ այլն: Մյուս կողմից՝ համայնքների համար լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Արենիի դեպքը, որտեղ արդեն իսկ արմատանում են համայնքի բնական եւ մշակութային ռեսուրսների լավագույն օգտագործման կոնկրետ ավանդույթներ:

2.3 ԱՇԽԱՏՈՒԺ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2.3.1 Մարդկային ռեսուրսներ

Ցանկացած տիպի զարգացման ծրագրի իրականացման տեսանկյունից մարդկային ռեսուրսների առկայությունը թերեւս ամենակարեւոր նախապայմանն է հանդիսանում: Այս պնդումը ճիշտ է նաեւ ԲՀՊՏ հիմնման եւ համայնքային զարգացման պարագայում: Հետազոտվող տարածքում մարդկային ռեսուրսների առկայության ուսումնասիրության համար կիրառվել է հետեւյալ տրամաբանությունը.

- Աշխատունակ տարիքի առկա բնակչության ընդհանուր թիվը բաժանվել է *աշխատունակների եւ անաշխատունակների*,
- Աշխատունակ բնակչության ընդհանուր թիվը բաժանվել է ըստ *զբաղվածության*,
- Զբաղված բնակչության թիվը բաժանվել է ըստ *զբաղվածության տեսակների*,
- Անաշխատունակ բնակչության թիվը բաժանվել է ըստ *անաշխատունակության պատճառների*:

Բնակչության բաշխվածքի մանրամասները ներկայացված են ստորեւ:

Աղյուսակ 11 - Համայնքների մարդկային ռեսուրսները, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ¹¹

	Ագարա- կածոր	Արենի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ	Ընդամենը
Աշխատունակ տարիքի բնակչությունը (15 -ից բարձր Ագարակածորի եւ Արենիի համար, 18 -ից բարձր Գնիշիկի եւ Խաչիկի համար)	1069	1472	168	797	3506
Աշխատունակ բնակչությունը, այդ թվում.	1034	1362	166	670	3232
Զբաղված գյուղատնտեսության մեջ	761	795	154	375	2085
Զբաղված ոչ-գյուղատնտեսության մեջ	168	251	12	128	559
Զբաղված կազմակերպություններում, ա.թ.	106	221	12	45	384
Պետական, ա.թ.	81	199	9	41	330
Համայնքում	41	22	3	4	70
Համայնքից դուրս	40	60	11	38	149
Մասնավոր	15	137	1	3	156
Ինքնազբաղված, ա.թ.	10	24	0	4	38
Առետրում	7	15	0	4	26

¹¹ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնսալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

Ծառայություններում	3	9	0	0	12
Չինվորականներ	25	30	1	80	136
Այլ ոչ-գյուղատնտեսական	37	0	0	3	40
Չգբաղվածներ եւ չաշխատողներ	105	316	0	167	588
Ուսանողներ	30	85	0	50	165
Գործազուրկներ	35	137	0	117	289
15-17տարեկան երիտասարդներ	40	94	0	0	134
Անաշխատունակ բնակչությունը, այդ թվում.	35	110	2	127	274
Հաշմանդամներ	10	17	0	27	54
Թոշակառուներ	25	93	2	100	220

Ներկայացված տվյալները պարզ հասկանալի են եւ մենք կանդրադառնանք միայն ամենակարեւոր հարցերին: Աշխատունակ բնակչությունը կազմում է այդ տարիքի ընդհանուր բնակչության 92.2%-ը: Աշխատունակ բնակչության ընդամենը 18.2%-ը ներգրավված է տնտեսական գործունեության մեջ տարբեր պատճառներով: Սա կարելու է բացահայտում է, որը վկայում է հետազոտվող համայնքներում զգալի մարդկային ռեսուրսների առկայության մասին, որոնք հետագայում կարող են ներգրավվել նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հիմնման գործընթացում: Գործազուրկների ընդհանուր թիվը կազմում է աշխատունակ բնակչության ընդամենը 9%-ը:

Աշխատունակ բնակչության գրեթե 65%-ը ներգրավված է գյուղատնտեսության մեջ, ինչը բնական է, քանի որ նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի պլանավորվող տարածքները գտնվում են հիմնականում գյուղական վայրերում: Այստեղ բոլոր ՏՏ-ներն ունեն առնվազն տնամերձ հողատարածքներ, որոնք մշակվում են գոնե անձնական սպառման գյուղատնտեսական ապրանքների արտադրության նպատակով:

Աշխատունակ բնակչության 11.9%-ը զբաղված են պետական եւ մասնավոր կազմակերպություններում՝ չնայած հիմնականում շարունակում են զբաղվել իրենց տնամերձերի մշակմամբ: Պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունները աշխատատեղերի հիմնական առաջարկողներն են համայնքներում, սակայն աշխատավարձերի մակարդակն այս հաստատություններում (կրթական, առողջապահական, համայնքապետարանային) աշխատավարձերի մակարդակը բավականին ցածր է: Մարդիկ շարունակում են կախված մնալ եկամուտների հիմնական աղբյուրներից, որոնք են գյուղատնտեսությունը եւ որոշ դեպքերում արտերկրյա փոխանցումները:

Մասնավոր (հիմնականում միկրո եւ փոքր) ձեռնարկատիրության ինտենսիվությունը հետազոտված համայնքներում բավականին ցածր է: Ընդամենը 38 բնակիչ են ինքնազբաղված ոչ-գյուղատնտեսական ոլորտներում, ինչը փոքր ցուցանիշ է 4 համայնքների համար: Նույնիսկ այս պարագայում հստակ կենտրոնացում է նկատվում Արենի համայնքում՝ հիմնականում պայմանավորված Երեւան-Մեղրի մայրուղու վրա նրա տեղակայվածության փաստով: Այս համայնքն ունի առեւտրի եւ ծառայությունների զարգացման որոշ պոտենցիալ, որը հաջողությամբ իրացվում է համայնքի բնակչության կողմից:

2.3.2 Եկամուտներ և աղքատություն

2.3.2.1 Աղքատության մակարդակը

Դիտարկված համայնքների ընդհանուր բնակչությունը կազմում է 4229 մարդ: SS-ների թիվը՝ 1205, ինչը նշանակում է, որ միջին SS անդամների թիվը կազմում է 3.5 մարդ: Այս տեղեկությունը կարելու է հետազոտված համայնքներում աղքատության մակարդակի գնահատման տեսանկյունից: Այն SS-ները, որոնց տարեկան եկամուտները չեն գերազանցում 1,200,000 ՀՀ դրամը, համարվել են *շատ աղքատ*, քանի որ նրանք ի վիճակի չեն բավարարել պարենային զամբյուղի պահանջները: Նմանապես՝ այն SS-ները, որոնց տարեկան եկամուտները չեն գերազանցում 1,500,000 ՀՀ դրամը, համարվել են *աղքատ*, քանի որ նրանք ի վիճակի չեն բավարարել սպառողական զամբյուղի պահանջները:

Բնակչության եկամուտների և աղքատության վերաբերյալ ներկայացված տվյալները որոշակիորեն ընդհանրացված են: Հատկացված ռեսուրսների սահմանափակության պատճառով հնարավոր չի եղել բնակչության ներկայացուցչական հետազոտություն իրականացնել և այն փոխարինվել համայնքային արագ գնահատման մեկ այլ գործիքով, այն է՝ փորձագետների հարցազրույցներով: Պետք է նշել, որ ուսումնասիրության արդյունքները որեւէ անակնկալներ չեն բերել և բավականին մոտ են Հայաստանի գյուղական տարածքներին բնորոշ միջին ցուցանիշներին: Հետազոտված համայնքներում եկամուտների և աղքատության միջին ցուցանիշները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 12 - SS-ների եկամուտների մակարդակը հետազոտված համայնքներում, 2010թ.¹²

	Ազարակա- ծոր		Արենի		Գնիշիկ (Մոզրով)		Խաչիկ		Ընդամենը	
	SS-ներ	%	SS-ներ	%	SS-ներ	%	SS-ներ	%	SS-ներ	%
SS եկամուտների տարեկան մակարդակը	344	100%	543	100%	61	100%	257	100%	1205	100%
1,200,000 ՀՀ դրամից պակաս (շատ աղքատ)	206	60%	272	50%	31	50%	77	30%	586	48.6%
1,200,000-1,500,000 ՀՀ դրամ (աղքատ)	114	33%	163	30%	24	40%	103	40%	404	33.5%
1,500,000-3,000,000 ՀՀ դրամ	17	5%	92	17%	6	10%	51	20%	166	13.8%
3,000,000 ՀՀ դրամից ավել	7	2%	16	3%	0	0%	26	10%	49	4.1%

Չարմանալի չէ, որ SS-ների, այն է՝ բնակչության մոտ 80%-ը բնորոշվել են որպես շատ աղքատ կամ աղքատ: Նրանց եկամուտները հիմնականում ձեւավորվում են սեփական սպառմանը միտված գյուղատնտեսական գործողություններից, և այլ զբաղվածությունից և արտերկրյա փոխանցումների ստացվող փոքրածավալ եկամուտներից: Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հիմնման տեսանկյունից սա խիստ բացասական ցուցանիշ է: ԲՀՊՏ-ները սովորաբար սահմանվում են որպես բնապահպանական և սոցիալ-տնտեսական տեսանկյուններից կայուն զարգացող տարածքներ, ինչը, ցավոք, ներկա իրավիճակում չի կարելի ասել նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հարակից տարածքի մասին:

Աղքատ տարածաշրջաններում ԲՀՊՏ-ների հիմնումն իսկական մարտահրավեր է, քանի որ տեղական աղքատ բնակչությունը սովորաբար հակված չէ խստաբար պահպանել բնական և պատմամշակութային հուշարձանները և անխնա շահագործում է դրանք նույնիսկ չնչին

¹² Աղբյուր՝ համայնքապետարաններ և համայնքներում կարծիք ձեւավորողներ

Եկամուտներ ստանալու ակնկալիքով: Բացի այդ, աղքատ համայնքները եւ դրանց բնակչությունը սովորաբար հակված կամ ի վիճակի չի լինում ներդրումներ կատարել մատուցվող ծառայությունների որակի, կրթական եւ առողջապահական ենթակառուցվածքների բարելավման, բնապահպանական ծրագրեր իրականացնելու նպատակով: Մարդիկ նախ եւ առաջ գերադասում են անդրադառնալ իրենց հանապազօրյա խնդիրներին:

Արտերկրից կատարվող գումարային փոխանցումները եւս նկատելի մաս են կազմում հետազոտված համայնքների SS-ների եկամուտներում: Գնահատվել է, որ ընդհանուր առմամբ 314 SS-ներ (ընդհանուրի 26%-ը) հարազատներ եւ բարեկամներ ունեն արտերկրում: Այս SS-ների կեսից ավելին կանոնավոր ձեւով դրամական աջակցություն են ստանում արտերկրյա իրենց հարազատներից: Ազարակածոր եւ Արենի համայնքների համար SS-ների կողմից ստացված գումարային փոխանցումների միջին գումարները կազմում են 2,000-2,500 ԱՄՆ դոլար, իսկ Գնիշիկ եւ Խաչիկ համայնքների համար՝ մոտ 1300 ԱՄՆ դոլար:

Սույն բաժնում ներկայացված վերլուծության կարելորագույն հետեւությունը վերաբերվում է աղքատության շատ բարձր մակարդակին: Բնակչության 80%-ից ավելին ներկա պահին աղքատ է, ինչը լրջագույն խոչընդոտ կարող է հանդիսանալ ԲՀՊՏ ստեղծման տեսանկյունից: Արդեն նշվել է, որ այս տարածքները պետք է մոդելային կայուն զարգացման լավագույն օրինակ հանդիսանան բնապահպանական երկարաժամկետ նպատակներ հետապնդելու համար: Այս առումով համայնքների զարգացումը լրջագույն մարտահրավեր է՝ ծառայած ինչպես ԲՀՊՏ հիմնման մեջ ուղղակիորեն ներգրավված կառույցների, այնպես էլ ՀՀ Կառավարության եւ միջազգային կազմակերպությունների առջեւ: Կոնկրետ եւ մեծածավալ միջոցառումն պետք է իրականացվեն համայնքներում աշխատատեղերի ստեղծման եւ լրացուցիչ եկամուտների գեներացման ուղղությամբ, այլապես ԲՀՊՏ գործարկումը երկարաժամկետ կտրվածքով կդառնա անհնար:

2.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2.4.1 Գյուղատնտեսական արտադրանք

2.4.1.1 *Հողագործություն*

Արդեն նշվել է, որ համայնքներում մշակված հողերի բաշխվածքի վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացվել են ասիմետրիկ տվյալներ: Սա հիմնականում տեղի է ունեցել տարբեր տնտեսվարողների (հողատերերի) կողմից լայնորեն կիրառվող եւ հարկերի նվազեցմանը միտված գործողությունների իրականացման պատճառով: Բազմաթիվ հողատերերի կողմից մրգի եւ խաղողի այգիները ներկայացվում են որպես վարելահողեր (երբեմն նույնիսկ խոտհարքներ), որոնց հողի հարկի մեծությունն անհամեմատ ավելի փոքր է:

Տվյալներ հավաքելու եւ դրանք պահելու վիճակը Հայաստանի գյուղական վայրերում հեռու է բավարար լինելուց: Իրականում վիճակագրական ծառայություններին ներկայացվում են զգալիորեն մոտավորեցված տեղեկություններ՝ չնայած դրանք հիմնականում արտացոլում են ընդհանուր միտումները: Միտումների տեսանկյունից, սակայն հնարավոր չէ ընդհանրացումներ կատարել բերքի ցուցանիշների վերաբերյալ՝ հիմնականում հաճախակի ցրտահարությունների, երաշտների եւ բնական այլ աղետների պատճառով: Ստորեւ բերված աղյուսակներում ներկայացված են հետազոտված համայնքներում հողագործության հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 13 - Հողագործության մակերեսները եւ բերքի քանակները, 2010թ. ¹³

Մշակաբույսեր	Ագարակածոր		Արեւի		Գնիշիկ (Մոզրով)		Խաչիկ		Ընդամենը	
	Մակերես, հա	Բերք, կգ	Մակերես, հա	Բերք, կգ	Մակերես, հա	Բերք, կգ	Մակերես, հա	Բերք, կգ	Մակերես, հա	Բերք, կգ
Հացահատիկ	55	126,500	0	0	41.5	33,200	317	586,000	413.5	745,700
Հատիկընդեղեն	1	1,500	1.5	1,500	0.12	400	3	8,000	5.67	11,400
Կարտոֆիլ	3.5	80,000	5	100,000	1.2	17,000	1.5	15,000	11.2	212,000
Բանջարեղեն	18.4	280,000	46.9	740,000	0.61	8,000	4	65,000	69.9	1,093,000
Կերային կուլտ.	52.9	162,300	31	250,000	56.3	200,000	143	820,000	283.2	1,432,300

Աշնանացան ցորենի մշակությունը կազմում է հացահատիկի մշակության ընդհանուր ծավալների կեսից ավելին հետազոտված համայնքներում: Հացահատիկի մշակությունը կատարվում է մեծամասամբ սեփական սպառման նպատակով. բերքատվության ցածր մակարդակը, ինչպես նաեւ մի շարք այլ լուրջ խնդիրներ, պարզապես բացառում են ամբարային նպատակներով հացահատիկի շահութաբեր մշակությունը փոքր ՏՏ-ների կողմից: Հետաքրքրական է, որ Արեւի համայնքում հացահատիկ գրեթե չի մշակվում. ՏՏ-ները գերադասում են վարելահողերում մշակել ավելի բարձրարժեք կուլտուրաներ, ինչպիսին է բանջարեղենը:

Հետազոտված համայնքներում բանջարեղենի մշակությունը գերակայում է, ինչը բացատրվում է տարածքի բնակլիմայական պայմաններով եւ անհրաժեշտ ներդրումների փոքր ծավալներով: Հատուկ անդրադարձ պետք է կատարվի կերային կուլտուրաներին: Իրականում դրանք գրեթե չեն մշակվում. պարզապես հավաքվում են խոտհարքներից: Բնակչությունը պարզապես չունի նման ռեսուրսներ բարձրարժեք կերային կուլտուրաների լայնածավալ մշակության համար:

Վայոց Ձորի բնակլիմայական պայմանները բառացիորեն պարարտ հող են ապահովում բարձրարժեք այնպիսի կուլտուրաների մշակության համար, ինչպիսիք են մրգերը, ընկույզը եւ խաղողը: Որոշ ապրանքատեսակների գծով (օրինակ՝ խաղողի) այս մարզը նույնիսկ առաջատար է, որոշների դեպքում էլ (օրինակ՝ ընկույզի) շատ ճանաչված: Հետազոտված համայնքներում մրգի եւ խաղողի մշակության համար օգտագործվող հողերի բաշխվածքը ներկայացված է Աղյուսակ 14-ում: Բերված տվյալների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հիշել մի կարեւոր հանգամանք. աղյուսակում ներկայացված են 2010թ. ցուցանիշները, երբ գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը կորցվել է ցրտահարությունների եւ կարկտահարության պատճառով: Նման ցրտահարությունները Հայաստանում պատահում են կանոնավոր ձեւով՝ 3-4 տարին մեկ անգամ:

Այս դեպքում եւս կիրառվել է որոշ ցուցանիշների ընդհանրացում եւ մոտավորեցում: Տարբերություններն այս անգամ պայմանավորված են այգիների ընդհանուր մակերեսների եւ դրանցում արտադրական տարիքի այգիների (այսինքն՝ բերքատու) անհամապատասխանությամբ՝ չնայած ոչ մեծ:

¹³ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ Վայոց Ձորի վիճակագրական գործակալություն

Աղյուսակ 14 - Մրգի մշակության տարածքները եւ բերքը, 2010թ. ¹⁴

Մշակաբույսեր	Ագարակածոր			Արենի			Գնիշիկ (Մոզրով)			Խաչիկ			Ընդամենը		
	Հա	Բերքատու, հա	Բերք, կգ	Հա	Բերքատու, հա	Բերք, կգ	Հա	Բերքատու, հա	Բերք, կգ	Հա	Բերքատու, հա	Բերք, կգ	Հա	Բերքատու, հա	Բերք, կգ
Հնդավորներ	10.4	9.4	20,500	0	0	0	0.57	0.57	3,500	31.0	31.0	59,000	41.97	40.97	83,000
Կորիզապտուղներ	30.2	29.2	8,000	66.5	66.5	42,500	7.76	3.76	7,500	5.0	5.0	2,200	109.46	104.46	60,200
Ընկույզ	2.5	2.5	4,500	2.0	2.0	1,000	4.44	0.44	2,000	20.0	20.0	4,200	28.94	24.94	11,700
Հատապտուղ	0.9	0.9	3,000	0	0	0	0.25	0.25	n/a	1	1	600	2.15	2.15	n/a
Խաղող, որից	3.6	3.6	2,500	94.0	94.0	580,000	13.0	13.0	67,000	32.0	32.0	60,000	142.6	142.6	709,500
<i>Սեղանի սորտ</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>94.0</i>	<i>94.0</i>	<i>580,000</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>32.0</i>	<i>32.0</i>	<i>60,000</i>	<i>126.0</i>	<i>126.0</i>	<i>640,000</i>
<i>Տեխնիկա. սորտ</i>	<i>3.6</i>	<i>3.6</i>	<i>2,500</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>13.0</i>	<i>13.0</i>	<i>67,000</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>16.6</i>	<i>16.6</i>	<i>69,500</i>

Հնդավորները հիմնականում ներկայացված են խնձորով եւ տանձով, որոնք մշակվում են ինչպես սեփական սպառման, այնպես էլ առևտրային նպատակներով: Քանակները փոքր են եւ SS-ները սպառում են այս մրգերը մեծ քանակությամբ: Իրավիճակն ուրիշ է կորիզապտուղների պարագայում: Հիմնական տեսակները ծիրանն է (Ագարակածոր) եւ դեղձը, որոնք բարձրարժեք եւ մեծ պահանջարկ ունեն: Այս մրգատեսակների զգալի մասն իրացվում է մեծածախ գնորդներին եւ Լույսիսկ արտահանողներին:

Ընկույզի մշակության ծավալներով առաջատարը Խաչիկն է. այստեղ են կենտրոնացած տնկարկների երկու երրորդը: Մշակության քանակը մեծ չէ, սակայն դրա մի մասը հստակ նախատեսվում է վաճառքի համար՝ հատկապես Ամանորի տոների շեմին: Ընկույզի մի որոշ քանակությունն օգտագործվում է քաղցր սուշուիի արտադրության նպատակով, որը մեծ քանակներով վաճառվում է մայրուղու վրա գտնվող առևտրի կետերում:

Վայոց Ձորը հայտնի է իր Արենի խաղողով, որը յուրահատուկ է ոչ միայն Հայաստանի, այլև ողջ աշխարհի կտրվածքով եւ օգտագործվում է Արենի Գիևու արտադրության նպատակով: Մեծապես տարածված է նաև սեղանի սորտերի խաղողի մշակությունը՝ հատկապես Արենի եւ Խաչիկ համայնքներում: Սեղանի սորտերի բերքատվությունը համեմատաբար ավելի ցածր է եւ իրացնելը՝ դժվար, սակայն դրանք ավելի բարձրարժեք են: Սեղանի սորտերի խաղողի գները 2-3 անգամ գերազանցում են տեխնիկական սորտերի խաղողների գներին:

Վերջին ժամանակահատվածում տեխնիկական սորտերի մշակության հետ կապված նոր խնդիրներ են առաջ եկել: Հիմնական գնորդները գիևու եւ կոնյակի գործարաններն են, որոնք սկսել են մթերման զգալի ցածր գներ սահմանել՝ 120-140 դրամ/կգ: ՀՀ ԳՆ ներկայացրած պաշտոնական հաշվարկներին համաձայն՝ խաղողի մշակության ինքնարժեքը կազմում է առնվազն 140 դրամ/կգ, ինչը տեխնիկական սորտերի խաղողի մշակությունը դարձնում է անհիմաստ: Այս հանգամանքը մեծապես խոչընդոտում է Վայոց Ձորում խաղողագործության զարգացմանը եւ շատ տնտեսություններ անցնում են սեղանի սորտերի արտադրությանը, որոնք Երեւանի մանրածախ շուկաներում վաճառվում են 350-400 դրամ/կգ գնով:

¹⁴ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ Վայոց Ձորի վիճակագրական գործակալություն

2.4.1.2 Անասնապահություն

Գյուղատնտեսությունը հանդիսանում է հետազոտված համայնքներում եկամուտների հիմնական աղբյուրը եւ անասնապահությունը մեծագույն դեր ունի այդ գործում: Անասնապահության զարգացման կարելորագույն նախապայմանը անասնազվիաքանակի առկայությունն է, որը հետազոտված համայնքների մասով ներկայացված է Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15 - Անասնազվիաքանակը, 2011թ. հունվարի է-ի դրությամբ¹⁵

Կենդանիներ	Ագարակա- ծոր՝ 344 SS	Արենի՝ 543 SS	Գնիշիկ՝ 61 SS	Խաչիկ՝ 257 SS
ԽԵԱ, այդ թվում՝	263	343	139	275
Կով	131	142	65	221
Արտադրող ցուլ	19	7	2	14
Երինջ, 1-2 տարեկան	16	96	15	36
Երինջ, 2 տարեկան. բարձր	7	26	4	4
Այլ (հորթեր)	90	72	53	-
Խոզ, այդ թվում՝	19	57		84
Մայր խոզ	7	12		11
Շրիշակ՝ 4-12 ամսական		45		2
Ոչխար, այդ թվում՝	83		97	156
Մաքի	64		74	156
Գառ	15		23	0
Այլ	4		0	0
Այծ, այդ թվում՝	40		195	46
Մայր այծ	21		162	46
Այլ	19		33	0
Ձի	2	6	14	3
Ավանակ	6	8		19
Ճագար		70		
Մեղվաընտանիք	301	555	252	362
Թռչում, այդ թվում՝		3090	324	1542
Հավեր եւ աքլորներ, ա. թ.՝	1385	3090	324	1542
<i>Արտադրող հավեր</i>	<i>1285</i>	<i>2627</i>	<i>226</i>	<i>1529</i>

Մինչեւ հետազոտված համայնքներում անասնապահության վիճակը քննարկելը անհրաժեշտ է կրկին անդրադառնալ անասնազվիաքանակի վերաբերյալ տվյալների որակին: Տեղեկությունները հավաքվել են համայնքապետարաններից եւ համեմատվել են վիճակագրական տվյալների հետ: Ընդհանուր առմամբ դրանք համընկնում են, բայց որոշ հարցեր պետք է նկատի ունենալ: Բազմաթիվ SS-ներ մասնակցում են աղքատներին միտված եւ պետության կողմից ֆինանսավորվող սոցիալական աջակցության ծրագրերի: Նույնիսկ մեկ կենդանի ունենալը այդ տնտեսություններին կարող է դուրս մղել այդ ծրագրերից, եւ SS-ները երբեմն գերադասում են չգրանցել իրենց անասունները: Այլ կերպ ասած՝ ներկայացված թվերը կարող են դիտարկվել որպես

նվազագույն գլխաքանակ, իսկ իրականում գլխաքանակը կարող է մի փոքր ավելի շատ լինել:

ԽԵԱ գլխաքանակ կա բոլոր համայնքներում, ամենաշատը՝ Արենիում: Չնայած դրան՝ անասնազվիաքանակի համադրությունը համայնքի SS-ների քանակին ցույց է տալիս, որ ոչ բոլոր SS-ները ունեն ԽԵԱ: Առկա ԽԵԱ կեսից ավելին պահվում է կաթի արտադրության նպատակով: Մնացած գլխաքանակը մատուցում է եւ պահվում է հիմնականում առևտրային նպատակներով: Այս տարածքում SS-ները դավուրմա են արտադրում (սպառման եւ վաճառքի նպատակներով), ինչը մսի վերամշակման եւ պահպանման շատ հարմար եղանակ է:

¹⁵ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ Վայոց Ձորի վիճակագրական գործակալություն

Ոչխարաբուծությունը եւ խոզաբուծությունն իրականացվում են հիմնականում առեւտրային նպատակներով՝ չնայած գլխաքանակն առանձնապես մեծ չէ: Եթե նույնիսկ կա պոտենցիալ՝ ապա այն իրացված չէ:

Մեկ տասնամյակից ավել է, որ տարբեր միջազգային ծրագրեր Վայոց Ձորում՝ այդ թվում նաեւ թիրախված համայնքներում, զարգացման ծրագրեր են իրականացնում: Ժամանակակից բարձր արտադրողական այծերի ներկրումը եւ բուծումը նմանատիպ ամենահաջող ծրագրերից է հանդիսանում առ այսօր: Այս այծերն ունեն բարձր արտադրողական եւ մաքուր տոհմային հատկանիշներ, իսկ դրանց բուծումը եւ ստացված կաթի վերամշակումը բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանքի արժեշղթայի իրականացման լավագույն օրինակ է:

Չարգացման լուրջ պոտենցիալ ունեցող գյուղատնտեսական գործունեության մյուս տարբերակը մեղվապահությունն է: Մեղվաընտանիքների քանակը բավականին մեծ է այլ կենդանիների գլխաքանակների համեմատությամբ: Հայաստանում մեղրը յուրահատուկ ապրանք է հանդիսանում, որը հիմնականում մինչեւ վերջ հնարավոր է իրացնել առանց մեծ խնդիրների:

Աղյուսակ 16 - Անասնապահական արտադրանքը, 2010թ. ¹⁶

Արտադրանք	Զ/Մ	Ագարակածոր	Արենի	Գնիշիկ	Խաչիկ	Ընդամենը
Կովի կաթ	լիտր	327,500	240,000	97,500	200,000	865,000
Ոչխարի կաթ	լիտր	20,750	0	0	0	20,750
Այծի կաթ	լիտր	14,000	0	19,440	5,000	38,440
Տավարի միս	կգ	12,000	9,940	5,000	15,000	41,940
Խոզի միս	կգ	720	1,800	0	2,000	4,520
Ոչխարի միս	կգ	400	0	10,000	1,200	11,600
Այծի միս	կգ	100	0	5,000	400	5,500
Հավի միս	կգ	50	2,000	0	800	2,850
Այլ միս	կգ	100	150	0	0	250
Ձու	հատ	80,000	500,000	33,900	150,000	763,900
Մեղր	կգ	3,000	8,000	0	3,700	14,700
Մեղրային այլ	լիտր	0	0	0	200	200
Այլ (բուրդ)	կգ	0	0	145	0	145

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ համայնքները անասնապահական արտադրանքի վերաբերյալ վիճակագրություն հիմնականում չեն հավաքում: Պաշտոնական վիճակագրությունը սովորաբար որդեգրում է հետեւյալ մոտեցումը. կենդանիների գլխաքանակը բազմապատկվում է տվյալ տարածաշրջանի համար արտադրողականության միջին ցուցանիշներով:

Սա շատ կոպիտ մոտեցում է եւ չի արտացոլում իրականությունը: Որոշում է ընդունվել հիմնվել համայնքներից ստացված գնահատականների վրա ինչպես արտադրանքի քանակի, այնպես էլ՝

դրա առեւտրայնության մակարդակների պարագայում:

2010թ. հետազոտված համայնքներում արտադրված կաթի քանակությունը կազմել է մոտ 1,000 տոննա, ինչն այնքան էլ մեծ քանակ չէ: Համեմատության համար նշենք, որ տարբեր կոոպերատիվների կողմից հիմնվող կաթի մթերման կետերի նվազագույն հզորությունը հենց այսքան է: Հաշվի առնելով հետազոտված համայնքների հեռավորությունն իրարից, դրանց համար կաթի կենտրոնացված մթերման կետի ստեղծումն այնքան էլ կենսական գաղափար չի հանդիսանա նման ծավալների պարագայում: Չնայած դրան՝ կաթի առեւտրայնության մակարդակը բավականին բարձր է գնահատվել, ինչը վկայում է այս ապրանքի բարձր պահանջարկի մասին: Բացի Խաչիկ համայնքից (որը զգալիորեն հեռու է իրացման շուկայից), հետազոտված համայնքներն այս կամ այն ձևով իրացնում են արտադրված կաթի մոտ 70%-ը: Սովորաբար ՏՏ-ները կաթը վերամշակում են

¹⁶ Աղբյուրը՝ համայնքապետարաններ

կաթնամթերքի կամ պանրի եւ վաճառում քաղաքային համայնքներում՝ շենք առ շենք պատվելով եւ առաջարկելով իրենց արտադրանքը: Որոշ ՏՏ-ներ զարգացել են այնքան, որ նույնիսկ պատվերներ են ընդունում: Առեւտրայնության նման բարձր մակարդակի պայմաններում անասնապահությունը եւ անասնապահական արտադրանքի թողարկումը զարգացման լուրջ պոտենցիալ կարող է ունենալ հետազոտված համայնքներում:

Մսի առեւտրայնության մակարդակը հստակ արտահայտված բարձր է Ագարակաձոր եւ Խաչիկ համայնքներում՝ մինչեւ 80%: Հիմնական վաճառքներն իրականացվում են բացօթյա տոնախմբությունների սեզոնի ընթացքում եւ Ամանորի տոների շեմին: Մսի առեւտրայնության մակարդակը զարմանալիորեն ցածր է գնահատվել Արենի համայնքում, որն ամենամոտիկն է իրացման շուկային, քանի որ տեղակայված է Երեւան-Մեղրի մայրուղու վրա եւ այստեղ առկա են իրացման բազմաթիվ կետեր:

Մեղրը եւ հարակից ապրանքները վերջինն են գյուղատնտեսական ապրանքների ցանկում, որոնց կցանկանալիք անդրադառնալ: Առեւտրայնության մակարդակը հասնում է 80-85%, ինչը բավականին բարձր է: Մեղրի պահանջարկն այնքան բարձր է, որ երբեմն պարզապես հնարավոր չի լինում (տնական) մեղր գնել արդեն հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից հետո: Մեղրի գները Հայաստանում անտրամաբանական բարձր են, սակայն այս ապրանքի պահանջարկը միեւնույն է շատ մեծ է: Իրացման ուղիները թույլ են զարգացած՝ չկա մակնիշում, փաթեթավորումը թույլ է, համային եւ որակական վերահսկողություն եւ փորձարկում չի իրականացվում, փաթեթավորումը սահմանափակվում է ապակյա հասարակ տարաներով: Չնայած այս ամենին՝ այս ապրանքը միեւնույն է իրացվում է շատ բարձր գներով: Այսպիսով՝ մեղվապահությունը եւ մեղրի արտադրությունը հետազոտված համայնքներում զարգացման լուրջ պոտենցիալ ունեն:

Արդեն նշվել է, որ գյուղատնտեսության զարգացումը հանդիսանում է հետազոտված համայնքներում բնակչության եկամուտների բարձրացման հիմնական հնարավորություններից մեկը: Արդեն իսկ կարելի է առանձնացնել գյուղատնտեսական գործունեության որոշ տեսակներ, որոնք ապահովում են բարձրարժեք եւ առեւտրայնության բարձր մակարդակ ունեցող մթերքների արտադրություն: Նման ապրանքների շարքում կարելի է թվարկել կորիզապտուղները, ընկույզը, խաղողը (հատկապես սեղանի սորտերը), այծաբուծության արտադրանքը եւ մեղրը: Համապատասխան մասնագիտական եւ ֆինանսական աջակցության պարագայում տեղական բնակչությունն ի վիճակի է բազմապատկել գյուղատնտեսական գործունեության ծավալները: Առեւտրայնության բարձր մակարդակը այս արտադրանքի իրացման երաշխիք է հանդիսանում, ինչն ուղղակիորեն կնպաստի բնակչության եկամուտների աճին:

Գյուղատնտեսության զարգացումը լուրջ ներդրում կարող է ունենալ նաեւ տուրիզմի զարգացման տեսանկյունից: Նախ – առաջ, այն թույլ կտա տուրիստներին առաջարկել թարմ եւ էկոլոգիապես մաքուր սնունդ: Միեւնույն ժամանակ գյուղատնտեսության հիմքի վրա կարելի է մշակել հատուկ ազրոտուրիստական ծառայություններ, որոնք ներկայումս բավականին պահանջված են հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների շրջանում:

Միեւնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինտենսիվ գյուղատնտեսության վարումը որոշակի առումով հակասում է ԲՀՊՏ հիմնման դրույթներին: Սա նշանակում է, որ ԲՀՊՏ հիմնման գործընթացում ներգրավված կառույցները պետք է որոշակի վերահսկողություն իրականացնեն հատկապես հողերի մեխանիզացված մշակման, թունաքիմիկատների եւ պարարտանյութերի օգտագործման, տնային կենդանիների արածեցման եւ այլ գործողությունների նկատմամբ:

2.4.2 Գյուղատնտեսական ենթակառուցվածքները

Գյուղատնտեսությունը սահմանվել է որպես Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հարակից համայնքների բնակչության հիմնական զբաղվածություն: Նախորդ բաժիններում սահմանվել են հետազոտված 4 համայնքներում գյուղատնտեսության առավել մեծ պոտենցիալ ունեցող ուղղությունները: Սակայն պետք է նաեւ նշել, որ զարգացման հնարավորությունները մեծապես կախված են տվյալ համայնքներում գյուղատնտեսական ենթակառուցվածքների առկայությունից եւ դրանց վիճակից: Մասնավորապես՝ ոռոգման համակարգի, անասնաբուժական ծառայությունների, գյուղատնտեսի ծառայությունների, մեխանիզացիայի, եւ այլն: Ստորել ներկայացված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների վիճակը հետազոտված համայնքներում:

Աղյուսակ 17 - Գյուղատնտեսական ենթակառուցվածքների առկայությունը եւ վիճակը, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ¹⁷

Գյուղատնտեսական ենթակառուցվածքներ	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ	Խաչիկ
Ոռոգման ջուր	կա եւ բավարար է	կա եւ բավարար է	կա եւ բավարար բնակչության 80%-ի համար	կա, բայց բավարար չէ
Անասնաբուժական ծառայություններ	կա եւ բավարար է	կա եւ բավարար է	կա եւ բավարար է	կա եւ բավարար է
Գյուղատնտեսի ծառայություններ	չկա	չկա	չկա	չկա
Սառնարանային պահեստ	չկա	չկա	չկա	չկա
Կաթի մթերման կետ	չկա	չկա	չկա	չկա
Գյուղատնտեսական մեխանիզացի, այդ թվում				
Տրակտոր	12 միավոր (8 գործող)	12 միավոր (8 գործող)	5 միավոր (գործող)	13 միավոր (12 գործող)
Կոմբայն	2 միավոր (գործող)	չկա	չկա	3 միավոր (3 գործող)
Բեռնատար (ներառյալ շինարարական)	20 միավոր (20 գործող)	64 միավոր (64 գործող)	5 միավոր (3 գործող)	7 միավոր (7 գործող)
Այլ	15 միավոր	16 միավոր	5 միավոր	27 միավոր

Ոռոգման ջրի անբավարարության մասին նշվել է Գնիշիկ եւ Խաչիկ համայնքներում: Գնիշիկի դեպքում այն հասանելի ՏՏ-ների ընդամենը 80%-ին, իսկ Խաչիկի դեպքում՝ բոլորին, բայց ոչ բավարար քանակությամբ: Այստեղ պետք է ջրամբար կառուցվի, ինչը թույլ կտա գարնան եւ անձրեւների շրջանում կուտակել ջուրը եւ օգտագործել ոռոգման սեզոնի ընթացքում: Ինչեւիցե, ոռոգման ջրի պակասը համայնքների կողմից չի գնահատվել որպես գյուղատնտեսական զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոն՝ բացառությամբ Խաչիկ համայնքի:

Բոլոր համայնքներն ունեն *անասնաբույժներ* եւ գոհ են նրանց ծառայություններից: Ի հակառակ՝ գյուղատնտեսներ չկան ոչ մի տեղ՝ համայնքները բավարար միջոցներ չունեն նրանց վճարելու համար: Դա մեծ խնդիր չէ Արենիում, որտեղ գործող գյուղատնտեսական միությունն անհրաժեշտ խորհրդատվություն է մատուցում իր անդամներին: Մյուս համայնքներում ֆերմերներն ինքնուրույն են որոշում, թե ինչպիսի գյուղատնտեսական միջոցառումներ, ինչ ինտենսիվությամբ եւ կանոնավորությամբ պետք է իրականացվեն: IFAD ծրագիրը պլանավորում է Խաչիկ համայնքում

¹⁷ Աղբյուրը՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

տնկարաններ հիմնել, ինչի դեպքում գյուղատնտեսներ հաստատ կպահանջվեն եւ կներգրավվեն ծրագրի կողմից:

Հետազոտված համայնքներում *շուկայահանման ենթակառուցվածքներ* չեն գործում: Բացատրությունը շատ պարզ կարող է լինել. արտադրության ծավալները մեծ չեն եւ նման ենթակառուցվածքների գործարկումը կարող է տնտեսապես ձեռնտու չլինել: Ինչեւիցե, դրանց բացակայությունը հիմնական արտադրատեսակների առետրայնության մակարդակի վրա զգալի բացասական ազդեցություն չի թողնում:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ բոլոր համայնքներն էլ գյուղատնտեսական զարգացման լուրջ պոտենցիալ են տեսնում իրենց մեջ: Համայնքապետերը եւ համայնքում հեղինակություն վայելող այլ բնակիչներ մատնանշել են, որ իրենց համայնքների բնակլիմայական պայմանները շատ հարմար են գյուղատնտեսական զարգացման համար՝ խաղողագործությունն ու մրգերի մշակությունը կրեկնում եւ կգարակածորում, անմշակ հողերի (արոտավայրերի) օգտագործումը եւ անասնապահության զարգացումը հաջիկում եւ Գնիշիկում: Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնների շարքում համայնքները նշել են *շուկաների մատչելիության ցածր մակարդակը, գյուղատնտեսական հումքի (բարձրորակ սերմերի, պարարտանյութերի եւ թունաքիմիկատների), անհասանելիությունը, վառելիքի թանկությունը, հողի մշակման սխալ եղանակները (խորհրդատվության պակասը), գյուղատնտեսական մեխանիզացիայի անբավարար մակարդակը, մեքենաների վարձակալության բարձր վճարները, արտաքին ֆինանսական ռեսուրսների թանկությունը (24% տարեկան իրական տոկոսադրույքը շատ թանկ է գյուղատնտեսական վարկերի համար):*

2.5 ԿՈՍՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտված համայնքներում կոմունալ ծառայությունների ուսումնասիրությունն անդրադարձել է բնական գազի, էլեկտրաէներգիայի եւ խմելու ջրի մատակարարման, աղբահանության եւ կեղտաջրերի հեռացման ծառայությունների առկայությանը եւ կանոնավորությանը: Այս ծառայությունների առկայությունը տվյալն համայնքներում SS-ների կենսամակարդակի եւ ապրելակերպի բնորոշման հետաքրքիր բնութագրիչներ են հանդիսանում:

Բնական գազի մատակարարումը բնապահպանական տեսանկյունից ամենակարեւոր կոմունալ ծառայությունն է հանդիսանում: Ներկայումս լայնորեն տարածված կարծիք կա, որ ջեռուցման այլընտրանքային աղբյուր ունենալու պարագայում անտառամերձ համայնքների բնակչությունը սահմանափակում (սվազեցնում) է վառելափայտի օգտագործումը խոհանոցային եւ ջեռուցման (հատկապես ձմռանը) նպատակներով: Ցավոք նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրին հարակից համայնքներում այս ենթադրությունը ստուգելու հնարավորություն չկար. բնական գազի մատակարարում համայնքներում չկա:

Հետազոտված համայնքների բոլոր SS-ներն ապահովված են *էլեկտրականությամբ*, որի մատակարարման որակը նորմալ է: Էլեկտրական հոսանքի անջատումներ լինում են ամսական 1-2 անգամ՝ առավելագույնը 1-2 ժամով, եթե լուրջ խնդիրներ չեն առաջանում, որոնց պարագայում անջատումները կարող են մի քանի ժամ տեւել: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ էլեկտրականության մատակարարման ցանցը (հատկապես հենասյուները) որոշ վայրերում կապիտալ վերանորոգման կարիք ունեն:

Բոլոր ՏՏ-ներն ապահովված են մշտական *խմելու ջրով*, ընդհատումները հազվադեպ են եւ ոչ տեւական: Մատակարարվող խմելու ջրի որակը ոչ միշտ է ընդունելի: Արեւի եւ հաչիկ համայնքների բնակչության կեսը իրենց դժգոհությունն են արտահայտել այս կապակցությամբ: Որոշ դեպքերում այս համայնքներում խմելու ջրի փոխարեն տեխնիկական ջուր են օգտագործում:

Ինչպես եւ Հայաստանի գյուղական համայնքների գերակշիռ մեծամասնության մոտ, հետազոտված համայնքներում եւս չկան *կոյուղու համակարգեր*: Կեղտաջրերը չեն մշակվում, ՏՏ-ների կողմից օգտագործվում են անհատական կեղտահորեր, ինչը բնապահպանական եւ սանիտարական տեսանկյուններից վտանգավոր է եւ կարող է լրջորեն աղտոտել տնամերձ հողամասերը եւ համայնքների տարածքները: *Կենցաղային թափոնների հեռացումն* ավելի ինտենսիվորեն է իրականացվում: Ազարակաձոր եւ Արեւի համայնքներում աղբահեռացումն իրականացվում է շաբաթական երկու անգամ, հաչիկում՝ շաբաթական մեկ անգամ, իսկ Գնիշիկում՝ ամսական երկու անգամ: Այսինքն՝ հեռացման կանոնավորությունը կախված է տվյալ համայնքում առկա բնակչության թվից եւ մարզկենտրոնի հեռավորությունից: Կարելու է նշել, որ համայնքներն ունեն առանձնացված տարածքներ, որտեղ կուտակվում են հեռացված թափոնները:

ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից հատկապես կարելու է հետազոտված համայնքներում կեղտաջրերի եւ կենցաղային թափոնների հեռացման խնդիրը: Այս խնդիրը լրջագույն խոչընդոտ է հանդիսանում համայնքներում տուրիզմի զարգացման տեսանկյունից: Որոշ համայնքներում անկանոն աղբակույտերը կուտակված են անմիջապես տեսարժան վայրերում եւ մեծապես վտանգում են շրջակա միջավայրը: Եթե կեղտաջրերի հեռացման խնդիրը խոշոր ներդրումներ պահանջող միջոցառում է, ապա աղբահեռացման գործողությունները հնարավոր է իրականացնել շատ ավելի փոքր ջանքերով: ԲՀՊՏ հիմնման մեջ ներգրավված կառույցներին առաջարկվում է անհապաղ ուշադրություն դարձնել համայնքներում եւ դրանց հարակից վայրերում շրջակա միջավայրի մաքրմանը եւ կանոնավոր աղբահեռացման համակարգի ներդրմանը:

2.6 ՄԱՍՆԱՎՈՐ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր ձեռնարկատիրությունը հետազոտված համայնքներում շատ զարգացած չէ՝ չնայած իրավիճակն այստեղ շատ ավելի լավ է, քան ուրիշ գյուղական վայրերում: Առաջատարը Արեւի համայնքն է, ինչը հիմնականում պայմանավորված Երեւան-Մեղրի մայրուղու վրա տեղակայված լինելով եւ համեմատաբար ավելի զարգացած ենթակառուցվածքներով ու բարվոք կենսապայմաններով: Գնիշիկ համայնքն ամենապասիվն է. այստեղ մասնավոր ձեռնարկատիրություն գրեթե չկա: Հետազոտության ամփոփ արդյունքները ներկայացվում են գյուղ առ գյուղ:

Ազարակաձոր համայնքում գործում են քարի արդյունահանման/մշակման 3 արտադրամասեր՝ առաջարկելով մոտ 15 աշխատատեղեր: Մշակման ծավալները մեծ չեն, գործունեությունն էլ անկանոն է: Մի կողմից, արտադրական նման միավորի առկայությունը դրական է, քանի որ այն աշխատանք է առաջարկում, եկամուտներ ապահովում աշխատողների համար եւ որոշ հարկային մուտքեր՝ համայնքի համար: Մյուս կողմից, քարի արդյունահանման եւ մշակման տեսարանները շատ գրավիչ չեն ոչ տուրիզմի զարգացման, ոչ էլ բնապահպանական տեսանկյուններից:

2 առելորի կետեր (2 աշխատատեղ) եւ մեկ հյուրատուն (7 աշխատատեղ) են գործում համայնքում: Մանրածախ առելորի կետերը փոքր են եւ առաջարկում են հիմնականում առաջին անհրաժեշտության ապրանքներ: Հիմնական գնումներն, այնուամենայնիվ, իրականացվում են

մարզկենտրոն Եղեգնաձորից: Հյուրատան առկայությունը խոստումնալից է, քանի որ այն վկայում է առնվազն որոշակի տուրիստական պատրաստվածության մասին:

Արենի համայնքում գործում են տարբեր տեսակի մի քանի բիզնեսներ. 1 ՀԷԿ (5 աշխատող), 1 փուռ (3 աշխատող), 2 գինու գործարան (10 աշխատող), 3 քարի մշակման արտադրամաս (15 աշխատող), կահույքի արտադրամաս (2 աշխատող): Բացի այդ համայնքում գործում են առևտրի 12 կետեր (12 աշխատող), 6 ռեստորան եւ հասարակական սննդի կետեր (14 աշխատող), 2 վարսավիրանոց եւ 2 մեքենաների վերանորոգման կետ: Այլ համայնքների համեմատությամբ Արենին բավականին զարգացած է եւ ունի զարգացման լուրջ պոտենցիալ:

Իրավիճակը ճիշտ հակառակն է Գնիշիկ համայնքում: Այստեղ կա միայն մեկ քարի արտադրամաս, որը սակայն միայն պահակ ունի եւ գործում է շատ անկանոն եւ չնչին քանակությամբ արտադրանք է թողարկում: Համայնքում առևտրի եւ ծառայությունների մատուցման որեւէ այլ ձեռնարկություններ չկան:

Իրավիճակը լավ չէ նաեւ Խաչիկ համայնքում. կան քարի մշակման երկու արտադրամասեր, որոնք փաստացի գործունեություն չեն իրականացնում եւ որեւէ աշխատող չունեն: 4 առևտրային կետեր համայնքին են մատակարարում առաջին անհրաժեշտության ապրանքներ: Իր ծառայություններն է առաջարկում նաեւ բավականին մեծ հանդիսությունների սրահը, որը սակայն աշխատողներ չունի:

Եզրակացությունն ակնհայտ է. մասնավոր ձեռնարկատիրությունը զարգացած է միայն Արենի համայնքում: Մյուս համայնքների շուկան չափազանց փոքր է, բնակչությունն անվճարունակ է, հիմնական շուկաները հեռու են եւ դժվար մատչելի: Նման իրավիճակում տեղական բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը կարող է լինել գյուղատնտեսությունը: Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային եւ հյուրատանային ծառայություններ եւ այլն) լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայություններ հասանելի են հիմնականում միայն Արենիում՝ հաշվի առնելով Գինու Փառատոնի ամենամյա իրականացումը, Նորավանքի Համալիրի առկայությունը եւ այլն: Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական եւ պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ, ավերակներ, քայլարշավի հնարավորություններ, եկեղեցիներ, քարանձավներ եւ այլ տեսարժան վայրեր: Ներկայումս այս հնարավորությունների մի փոքր մասն է իրացվում եւ լուրջ բարելավման անհրաժեշտություն կա: Հետազոտված համայնքների տուրիստական պատրաստվածության հետազոտությունն իրականացվել է զուգահեռաբար եւ կներկայացվի առանձին հաշվետվությամբ:

2.7 ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Սոցիալ-տնտեսական հետազոտության ժամանակ համայնքների ներկայացուցիչներին առաջարկվել է ներկայացնել իրենց բնակավայրերի հիմնական ուժեղ (դրական), թույլ (բացասական) կողմերը, ինչպես նաեւ համայնքներում առկա զարգացման հնարավորությունները երեք հիմնական առումներով՝ *բնապահպանական, տնտեսական եւ սոցիալական*: Ներկայացված պատասխանները ամփոփ ներկայացված են **առանց խմբագրման**:

Տարբեր տեղական շահառուների պատկերացումները իրենց տարածքների ուժեղ եւ թույլ կողմերի վերաբերյալ չեն վերլուծվել, համամասնություններ չեն հաշվարկվել: Պարզապես ներկայացվել են բոլոր շահառուների բոլոր պատասխանները, որպեսզի պարզ դառնա նրանց ընդհանուր

տրամադրվածությունը: Առավել ամփոփ եւ գիտականորեն հիմնավորված մոտեցում է դրսևորվել իրական SWOT վերլուծության մեջ, որը ներկայացում է ավելի ուշ:

2.7.1 Բնապահպանական տեսանկյուն

2.7.1.1 Ուժեղ կողմեր

Հետազոտված համայնքների ներկայացուցիչների կողմից նշվել են բնապահպանական տեսանկյունից առկա հետևյալ ուժեղ կողմերը.

- Գեղատեսիլ բնություն,
- Բազմաթիվ քարանձավներ,
- Մաքուր օդ,
- Գետերի եւ հովիտների առատություն,
- Էկոլոգիապես մաքուր միջավայր,
- Հեռավորությունը կենտրոնական մայրուղիներից (Գնիշիկի եւ Խաչիկի դեպքում),
- Արդյունաբերական ձեռնարկությունների բացակայություն,
- Արեւային օրեր ձմռան ամիսներին,
- Ձմեռային սպորտաձեւերը զարգացնելու լավ հնարավորություններ,
- Չով կլիման ամռան ամիսներին:

2.7.1.2 Թույլ կողմեր

Բնապահպանական տեսանկյունից միակ թույլ կողմը ներկայացվել է Արենի համայնքում, այն է՝ շոգ ամառը եւ ամռան ամիսներին խմելու ջրի վատ որակը:

2.7.1.3 Հնարավորություններ

Համայնքների ներկայացուցիչները հնարավորությունների շարքում նշել են տուրիզմի զարգացման պոտենցիալը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը՝ չնայած այս հնարավորությունը ճիշտ կլիներ հիշատակել ավելի շուտ տնտեսական տեսանկյունից:

2.7.2 Սոցիալական տեսանկյուն

2.7.2.1 Ուժեղ կողմեր

Հետազոտված համայնքների սոցիալական միակ ուժեղ կողմը ներկայացվել է Արենիում, այն է՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների, սպորտսմենների, արվեստագետների առկայությունը համայնքում:

2.7.2.2 Թույլ կողմեր

Սոցիալական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական թույլ կողմերն են.

- Բնակչությունը ծուլացել է,

- Աղբբեջանին սահմանամերձ լինելը,
- Գործազրկության բարձր մակարդակը,
- Բնակչության՝ հատկապես երիտասարդների միգրացիան,
- Վատ կենսապայմանները, տների պակասը, հնացած շենքեր, վերանորոգման դժվարություններ:

2.7.3 Տնտեսական տեսանկյուն

2.7.3.1 Ուժեղ կողմեր

Տնտեսական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական ուժեղ կողմերն են.

- Ինքնահոս ոռոգման համակարգի առկայությունը Արենիում,
- Անասնապահության համար անհրաժեշտ հողային ռեսուրսների (հատկապես արոտավայրերի եւ խոտհարքների) առկայությունը Գնիշիկում,
- Մեծ քանակությամբ վարելահողերի առկայությունը Խաչիկում (դրանց մի մասն ազատված է հարկումից):

2.7.3.2 Թույլ կողմեր

Տնտեսական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական թույլ կողմերն են.

- Կանոնավոր ցրտահարությունները Ագարակաձորում (հատկապես ծիրանի բերքը փչացնող),
- Ժամանակակից մեխանիզացիայի սահմանափակությունը Ագարակաձորում եւ Արենիում,
- Գյուղատնտեսական հումքատեսակների՝ հատկապես սերմերի անբավարարությունը Ագարակաձորում,
- Հողերի սահմանափակ քանակը Արենիում,
- Ոռոգման համակարգի բացակայությունը Գնիշիկում,
- Գնիշիկի հեռավորությունն իրացման շուկայից,
- Խաչիկի վարելահողերի մշակության վտանգները եւ անհնարիսությունը Աղբբեջանին սահմանամերձ լինելու պատճառով,
- Եկամուտների ցածր մակարդակը:

2.7.3.3 Հնարավորություններ

Տնտեսական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական հնարավորություններն են.

- Տուրիզմի (հատկապես Էկո-տուրիզմի) զարգացման պոտենցիալը, թանգարան հիմնելու համար անհրաժեշտ մեծ քանակությամբ նյութերի առկայությունը, բազմաթիվ խաչքարերի եւ պատմական հուշարձանների առկայությունը,
- Աշխարհագրական լավ դիրքն ու գյուղատնտեսական զարգացման համար նպաստավոր կլիմայական պայմանները Ագարակաձորում եւ Արենիում:

2.7.4 Եզրակացություն

Ակնհայտ է, որ ուժեղ եւ թույլ կողմերի վերը բերված ներկայացումը դասական SWOT վերլուծություն չի հանդիսանում: Հետազոտվողները չէին կարող գիտականորեն հետեւողական եւ ճշգրիտ

պատասխաններով հանդես գալ: Չնայած դրան՝ ստացված պատասխանները ներկայացվել են առանց խմբագրման, ինչը թույլ կտա հստակորեն փոխանցել համայնքների ներկայացուցիչների իրենց հարազատ գյուղերի վերաբերյալ ունեցած կարծիքը, պատկերացումները, ակնկալիքները: Սա նաեւ կարելու է հետագայում տեղեկացվածության բարձրացման եւ դասընթացների իրականացման միջոցառումներ պլանավորելու տեսանկյունից:

Կարելի է ամփոփել, որ համայնքներն ավելի շատ թույլ կողմեր ունեն, քան ուժեղ: Բոլոր համայնքներում էլ կան ենթակառուցվածքների, գյուղատնտեսական հումքի, երկարաժամկետ եւ մատչելի ֆինանսավորման, շուկաների հասանելիության եւ բազմաթիվ այլ հարցերի հետ կապված խնդիրներ: Ապրելակերպը համայնքներում հիմնականում աղքատ է եւ շուտափույթ բարելավման կարիք ունի: Աղբբեջանի հետ սահմանի մոտիկությունն էլ ավելի է վատթարացնում իրավիճակը՝ համայնքների զարգացումը վերածելով իսկական մարտահրավերի:

Գյուղատնտեսական հողերի առկայությունը եւ բարենպաստ կլիմայական պայմանները հիմնական ուժեղ կողմն ու զարգացման հնարավորությունն են հանդիսանում: Արեւի համայնքն ունի համեմատաբար զարգացած մասնավոր ձեռնարկատիրություն՝ պայմանավորված հիմնականում իր դիրքով, չափսերով եւ համայնքի տարածքում պատմամշակութային հուշարձանների առկայությամբ: Այս համայնքի դեպքը կարելի է տարածաշրջանի համար օրինակելի համարել բազմաթիվ առումներով: Կանոնավոր հանդիսությունների կազմակերպումը եւ տեղական արտադրանքի ներկայացումը ճանաչում է բերել համայնքին, եւ ինչու ոչ՝ նույնիսկ ողջ մարզին: Այս փորձառությունը կարող է հաշվի առնվել եւ հաջողությամբ կիրառվել այլ համայնքների կողմից եւս:

Հետազոտված համայնքներում տուրիզմը եւ գյուղատնտեսությունը զարգացման հիմնական հնարավորություններն են հանդիսանում: Դրա պոտենցիալն առկա է եւ շուկայական իրավիճակն էլ խոստումնալից: Տեղական բնակչությունը շատ լավ հասկանում է այս հանգամանքը եւ պատրաստ է իր մասնակցությունը բերել այդ գործին: Հարակից տարածքների զարգացումը եւ համայնքներում կենսապայմանների բարելավումը զգալիորեն կնպաստի նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊՏ հիմնման նպատակների իրականացմանը, այն է՝ բնապահպանական եւ սոցիալ տնտեսական իրավի-ակի բարելավմանը:

Համայնքների համար ամբողջացված SWOT վերլուծության պատկերը ներկայացված է հաջորդիվ:

2.7.5 Ամբողջական SWOT վերլուծություն

2.7.5.1 Ուժեղ կողմեր

Հետազոտված համայնքների ուժեղ կողմերի թվում նշվել են ԲՀՊՏ հիմնման Ծրագրի տեսանկյունից ներքին այն գործոնները, որոնք ապագա ԲՀՊՏ-ի համար զարգացման եւ մրցակցային առավելությունների լուրջ նախադրյալներ են հանդիսանում: Մասնավորապես ուժեղ կողմերից են.

- Տվյալ տարածքում ԲՀՊՏ հիմնելու վերաբերյալ ՀՀ Կառավարության եւ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ընդունված որոշման առկայությունը,
- Ապագա ԲՀՊՏ համայնքներում հիմնական շահառուների դրական տրամադրվածությունը ԲՀՊՏ հիմնման վերաբերյալ,
- ԲՀՊՏ հիմնմանը ներգրավված կազմակերպությունների փորձառությունը,
- Անմիջապես ապագա ԲՀՊՏ-ում արդյունաբերական խոշոր կազմակերպությունների բացակայությունը,
- Ապագա ԲՀՊՏ համայնքներում մարդկային ռեսուրսների առկայությունը,

- Ապագա ԲՀՊՏ համայնքներում բարձրարժեք գյուղատնտեսություն ծավալելու փորձը,
- Մշակութային կանոնավոր եւ միջազգային ճանաչում ունեցող միջոցառումների կազմակերպման եւ հաջող իրականացման փորձը:

2.7.5.2 Թույլ կողմեր

Հետազոտված համայնքների թույլ կողմերի թվում նշվել են այն գործոնները, որոնք ապագա ԲՀՊՏ-ի համար կարող են զարգացման լուրջ խոչընդոտ հանդիսանալ: Մասնավորապես թույլ կողմերից են.

- Բնակչության ծերացման միտումները, երիտասարդների միգրացիան,
- Գյուղատնտեսական ենթակառուցվածքների թույլ վիճակը,
- Սոցիալական ենթակառուցվածքների թույլ վիճակը եւ բացակայությունը,
- Համայնքներում բնակչության եկամուտների ցածր մակարդակը, աղքատությունը,
- Համայնքներում բնակչության վատ կենսապայմանները:

2.7.5.3 Հնարավորություններ

Հնարավորությունների ներքո նշվել են արտաքին այն գործոնները, որոնց հետագա անդրադարձը եւ կիրարկումը թույլ է տալիս դրանք վերածել ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից ուժեղ կողմերի: Մասնավորապես.

- Եզակի գեղատեսիլ բնությունը եւ մաքուր օդը,
- Մեծ քանակությամբ բնական, պատմամշակութային, գիտական եւ այլ հուշարձանների առկայությունը,
- Բարձրարժեք գյուղատնտեսության զարգացման համար հարմար լանդշաֆտային եւ կլիմայական պայմանները,
- Հետաքրքիր հանգստի եւ առողջության վերականգնման համար հարմար բնական պայմանների առկայությունը, փափուկ կլիման
- Տուրիզմի բազմաթիվ տեսակների՝ ագրոտուրիզմի, պատմամշակութային տուրիզմի, էթնիկ տուրիզմի, քայլարշավների եւ ճամբարների կազմակերպման, քարանձավային տուրիզմի, հանգստի եւ առողջության վերականգնման եւ այլ հնարավորություններ:

2.7.5.4 Վտանգներ

Վտանգների ներքո նշվել են արտաքին այն գործոնները, որոնց հետագա անդրադարձը եւ կիրարկումը կարող է լուրջ կասկածի տակ դնել ԲՀՊՏ-ների զարգացումը Վայոց Ձորի մարզում: Միաժամանակ պետք է նշել, որ նման գործոնները շատ չեն. թերեւս կարելի է առանձնացնել միայն Ադրբեջանի հետ սահմանամերձ լինելը:

2.8 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲՀՊՏ-ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԲՀՊՏ հիմնման վերաբերյալ շահառուների վերլուծության առաջադրանքի ներքո համայնքների սոցիալ-տնտեսական հետազոտության իրականացումն ինքնանպատակ միջոցառում չէ: Այն երկակի կարելուրության գործողություն է, որը նպատակ ունի ա) պարզաբանել եւ հստակ սահմանել կոնկրետ տարածքում ԲՀՊՏ հիմնման նախնական հիմքերը եւ բ) գնահատել, թե ԲՀՊՏ զարգացումն ինչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հաշվետվության առանձին բաժիններում այս խնդիրներին անդրադարձ արդեն իսկ կատարվել է: Ստորեւ ներկայացված են ամփոփ եզրակացությունները:

2.8.1 Տեղական հնքակառավարում եւ ֆինանսներ

Հարակից համայնքների ղեկավարները կարելուր ռազմավարական դեր կարող են ունենալ ԲՀՊՏ զարգացման տեսանկյունից: Ակնհայտ է, որ նրանց օժանդակությունը այս խնդրում միանշանակ նախապայման է հանդիսանում ԲՀՊՏ կայացման համար: Հետազոտված համայնքների մեծ մասի ղեկավարները պաշտոնավարում են արդեն բավականին երկար եւ լավ տեղյակ են իրենց համայնքների խնդիրներին: Միայն այս խնդիրների արմատական լուծման պարագայում հնարավոր կլինի ապահովել ԲՀՊՏ կայուն զարգացումը, ինչը նշանակում է, որ Ծրագրի համագործակցությունը համայնքապետերի եւ ընդհանրապես տեղական բնակչության հետ այլընտրանք չունի:

ԲՀՊՏ ստեղծման եւ մասնավորապես Էկոտուրիզմի զարգացման առումներով անհրաժեշտ է սերտ համագործակցություն ծավալել պետական կառույցների եւ զարգացման ֆինանսավորում իրականացնող միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ միտված համայնքների ընդհանուր եւ ենթակառուցվածքային զարգացման ծրագրերի իրականացմանը: Սեփական ռեսուրսներով հետազոտված համայնքները պարզապես ի վիճակի չեն (եւ մոտ ապագայում չեն լինի) վերականգնել ԲՀՊՏ զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Միաժամանակ, ԲՀՊՏ զարգացումը եւ կայացումը մի գործընթաց է, որն իր հերթին կարող է մեծապես նպաստել համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանը: Սա պայմանավորված է հատկապես ԲՀՊՏ նկատմամբ տեղական եւ միջազգային կառույցների ուշադրությամբ եւ (հիմնականում միջազգային կառույցների պարագայում) ֆինանսավորման պատրաստակամությամբ: Այս գաղափարն անհրաժեշտ է հասցնել համայնքների հասարակության գիտակցությանը եւ ներգրավել նրանց գործընթացի մեջ:

2.8.2 Հողօգտագործում

ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի հողերի գյուղատնտեսական օգտագործումը: ԲՀՊՏ-ն ըստ սահմանման պետք է հանդիսանան կայուն զարգացման տարածքներ եւ համայնքներում պետք է ապահովվեն եկամուտների գեներացման արդյունավետ հիմքեր: Տվյալ պարագայում լավագույն այլընտրանքը գյուղատնտեսության զարգացումն է: Այս նպատակով ոչ բոլոր նախադրյալներն են առկա. հողագործության վարման պայմանները եւ եղանակները համայնքներում արդյունավետ չեն: ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից լուրջ միջոցառումներ պետք է իրականացվեն հողերի պլանավորման, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման, բերքատվության բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման համակարգերի վերականգնման եւ այլ առումներով:

2.8.3 Ժողովրդագրական հոսիվիճակ

ԲՀՊՏ հիմնման գործընթացն ակնկալում է մարդկային ռեսուրսների առկայություն կոնկրետ տարածքներում: Հետազոտված համայնքներում առկա մարդկային և աշխատանքային ռեսուրսները (բնակչության թվաքանակը, սեռատարիքային բաշխվածքը, կրթական մակարդակը և այլն) բավարար են ԲՀՊՏ-ների զարգացման տեսանկյունից: Մյուս կողմից՝ ԲՀՊՏ-ների զարգացման արդյունքում տեղական բնակչությունը հնարավորություն կստանա նոր որակներ և ունակություններ ձեռավորել, նոր տեսակի ծառայություններ ձեռավորել և մատուցել, որոնք ներկայումս դեռևս սաղմնային վիճակի մեջ են գտնվում: Այս առումով մեծ աշխատանք ունեն անելու նաեւ ԲՀՊՏ-ների զարգացման մեջ ներգրավված կազմակերպությունները: Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության և վստահության բարձրացման, կրթական և վերապատրաստման, լրացուցիչ շահագրգռվածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

2.8.4 Սոցիալական ծառայություններ և ենթակառուցվածքներ

Սոցիալական ծառայությունների և ենթակառուցվածքների զարգացումն անհրաժեշտ է նախ և առաջ համայնքների կայուն զարգացման առումով: Միաժամանակ՝ դա ԲՀՊՏ կայացման նախապայման է հանդիսանում: Ներկայիս իրավիճակում նախադրյալները դեռևս կատարյալ չեն. համայնքային և միջհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չէ և կան անանցանելի հատվածներ, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային և էթնոտուրիզմի ենթակառուցվածքներն անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումներ գրեթե չկան և այլն: Մյուս կողմից՝ համայնքների համար լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Արենիի դեպքը, որտեղ արդեն իսկ արմատանում են համայնքի բնական և մշակութային ռեսուրսների լավագույն օգտագործման կոնկրետ ավանդույթներ:

Կրկին ականատես ենք երկակի իրավիճակի՝ ԲՀՊՏ կայացման համար անհրաժեշտ է անհապաղ և մեծածավալ ներդրումներ իրականացնել սոցիալական ծառայությունների ստեղծման և համայնքային ենթակառուցվածքների վերականգնման համար: Միաժամանակ, ԲՀՊՏ աշխատանքը մեծապես կնպաստի այդ ծառայությունների վերջնական կայացմանը և ենթակառուցվածքների հետագա կայուն զարգացմանը:

2.8.5 Աղբատություն

Հետազոտված համայնքներում բնակչության 80%-ից ավելին ներկա պահին աղքատ է, ինչը լրջագույն խոչընդոտ կարող է հանդիսանալ ԲՀՊՏ ստեղծման համար: ԲՀՊՏ-ն պետք է մոդելային կայուն զարգացման լավագույն օրինակ հանդիսանան բնապահպանական երկարաժամկետ նպատակներ հետապնդելու համար: Այս առումով համայնքների զարգացումը լրջագույն մարտահրավեր է՝ ծառայած ինչպես ԲՀՊՏ զարգացման մեջ ուղղակիորեն ներգրավված կառույցների, այնպես էլ ՀՀ Կառավարության և միջազգային կազմակերպությունների առջև: Կոնկրետ և մեծածավալ միջոցառումներ պետք է իրականացվեն համայնքներում աշխատատեղերի ստեղծման և լրացուցիչ եկամուտների գեներացման ուղղությամբ, այլապես ԲՀՊՏ գործարկումը երկարաժամկետ կտրվածքով կդառնա անհնար:

2.8.6 Գյուղատնտեսություն

Տնտեսական կայուն զարգացումը ԲՀՊՏ-ներին հարակից համայնքներում դրանց կայացման հիմնական գրավականներից է: Միայն բարեկեցիկ կենսապայմաններում ապրող եւ կայուն եկամուտներ ունեցող բնակչությունը կարող է իսկապես արժեւորել առկա բնական պայմանները: Գյուղատնտեսության զարգացումը հետազոտված համայնքներում բնակչության եկամուտների բարձրացման հիմնական հնարավորություններից է: Կարելի է առանձնացնել գյուղատնտեսական գործունեության որոշ տեսակներ, որոնք ապահովում են բարձրարժեք եւ առեւտրայնության բարձր մակարդակ ունեցող մթերքների արտադրություն: Նման ապրանքների շարքում կարելի է թվարկել կորիզապտուղները, ընկույզը, խաղողը (հատկապես սեղանի սորտերը), այծաբուծության արտադրանքը եւ մեղրը: Համապատասխան մասնագիտական եւ ֆինանսական աջակցության պարագայում տեղական բնակչությունն ի վիճակի է բազմապատկել գյուղատնտեսական գործունեության ծավալները: Առեւտրայնության բարձր մակարդակը այս արտադրանքի իրացման երաշխիք է հանդիսանում, ինչն ուղղակիորեն կնպաստի բնակչության եկամուտների աճին:

Գյուղատնտեսության զարգացումը լուրջ ներդրում կարող է ունենալ նաեւ տուրիզմի զարգացման տեսանկյունից: Նախ – առաջ, այն թույլ կտա տուրիստներին առաջարկել թաքմ եւ էկոլոգիապես մաքուր սնունդ: Միեւնույն ժամանակ գյուղատնտեսության հիմքի վրա կարելի է մշակել հատուկ ագրոտուրիստական ծառայություններ, որոնք ներկայումս բավականին պահանջված են հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների շրջանում:

Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնների շարքում համայնքները նշել են շուկաների ցածր մատչելիությունը գյուղատնտեսական հումքի (բարձրորակ սերմերի, պարարտանյութերի եւ թունաքիմիկատների), անհասանելիությունը, վառելիքի թանկությունը, հողի մշակման սխալ եղանակները (խորհրդատվության պակասը), գյուղատնտեսական մեխանիզացիայի անբավարար մակարդակը, մեքենաների վարձակալության բարձր վճարները, արտաքին ֆինանսական ռեսուրսների թանկությունը:

Միեւնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինտենսիվ գյուղատնտեսության վարումը որոշակի առումով հակասում է ԲՀՊՏ-ների զարգացման դրույթներին: Սա նշանակում է, որ գործընթացում ներգրավված կառույցները պետք է որոշակի վերահսկողություն իրականացնեն հատկապես հողերի մեխանիզացված մշակման, թունաքիմիկատների եւ պարարտանյութերի օգտագործման, տնային կենդանիների արածեցման եւ այլ գործողությունների նկատմամբ:

2.8.7 Սանիտարական վիճակ

ԲՀՊՏ հիմնման եւ ընդլայնման տեսանկյունից հատկապես կարեւորվում է հետազոտված համայնքներում կեղտաջրերի եւ կենցաղային թափոնների հեռացման խնդիրը: Այս խնդիրը լրջագույն խոչընդոտ է հանդիսանում համայնքներում տուրիզմի զարգացման տեսանկյունից: Որոշ համայնքներում անկանոն աղբակույտերը կուտակված են անմիջապես տեսարժան վայրերում եւ մեծապես վտանգում են շրջակա միջավայրը: Եթե կեղտաջրերի հեռացման խնդիրը խոշոր ներդրումներ պահանջող միջոցառում է, ապա աղբահեռացման գործողությունները հնարավոր է իրականացնել շատ ավելի փոքր ջանքերով: Ներգրավված կառույցներին առաջարկվում է անհապաղ ուշադրություն դարձնել համայնքներում եւ դրանց հարակից վայրերում շրջակա միջավայրի մաքրմանը եւ կանոնավոր աղբահեռացման համակարգի ներդրմանը:

2.8.8 Մասնավոր ձեռնարկատիրություն և տուրիստական ներուժ

Մասնավոր ձեռնարկատիրությունը զարգացած է միայն Արենի համայնքում: Մյուս համայնքների շուկան չափազանց փոքր է, բնակչությունն անվճարունակ է, հիմնական շուկաները հեռու են և դժվար մատչելի: Նման իրավիճակում տեղական բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը կարող է լինել գյուղատնտեսությունը: Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ և այլն) լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայություններ հասանելի են հիմնականում միայն Արենիում՝ հաշվի առնելով Գինու Փառատոնի ամենամյա իրականացումը, Նորավանքի Համալիրի առկայությունը, գործող հյուրատունը և այլն:

Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական և պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ, ավերակներ, քայլարշավի հնարավորություններ, եկեղեցիներ, քարանձավներ և այլ տեսարժան վայրեր: Ներկայումս այս հնարավորությունների մի փոքր մասն է իրացվում և լուրջ բարելավման անհրաժեշտություն կա: Հետազոտված համայնքների տուրիստական պատրաստվածության հետազոտությունն իրականացվել է զուգահեռաբար և կներկայացվի առանձին հաշվետվությամբ:

3 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

3.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հարակից համայնքների սոցիալ-տնտեսական տվյալների բազա

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հարակից համայնքների սոցիալ-տնտեսական տվյալների բազաները Ագարակաձոր, Արենի, Գնիշիկ եւ Խաչիկ համայնքների համար կցվում են ստորեւ:

[SEDs-Vayots Dzor\SED Agarakadzor.doc](#)

[SEDs-Vayots Dzor\SED Areni.doc](#)

[SEDs-Vayots Dzor\SED Grinshik.doc](#)

[SEDs-Vayots Dzor\SED Khachik.doc](#)